Գիտություն

ՄԱՐՏ
№3
(396)
2025 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ ● Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

Համագործակցության շրջանակային համաձայնագիր

Ս/թ. մարտի 14-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան հյուրընկալեց չինական Նանջինգի օդագնացության և տիեզերագնացության համալսարանի (NUAA), EDA տեխնոլոգիական նորարարությունների ազգային կենտրոնի, Հարավարևելյան համալսարանի (NCTIEDA&SEU) և EDA Ecosystem Development Accelerator (EDAA)-ի պատվիրակություններին: Պաշտոնական այցի շրջանակում կնքվեց համագործակցության շրջանակային համաձայնագիր՝ էլեկտրոնային նախագծման ավտոմատացման (EDA) ոլորտում համագործակցության զարգացման նպատակով:

Հայկական կողմից համաձայնագիրը ստորագրեցին ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրեն Հրաչյա Ասցատրյանը, Հայ-Ռուսական համալսարանի ռեկտոր Էդվարդ Սանդոյանը, չինական կողմից՝ NUAA-ի պրոֆեսոր Բին Ցզյանը, NCTIEDA&SEU-ի դոկտոր Ժաոյանգ Չժանը, EDAA-ի տնօրեն Յունշեն Չժենգը: Այս համագործակցության շրջանակում էլեկտրոնային նախագծման ավտոմատացման ոլորտում կիրականացվեն անձնակազմի փոխանակման ծրագրեր, համատեղ հետազոտություններ, մասնագետների վերապատրաստում, փոխշահավետ այլ ծրագրեր:

ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սաղյանը նշեց, որ այս միջոցառումն արժեքավոր հնարավորություն է գիտնականների միջև ավելի սերտ համագործակցությունը խթանելու և գլոբալ մարտահրավերները կանխելու համար:

Աշոտ Սաղյանը կարևորեց չինական կողմի հետ համագործակցության զարգացումը՝ նշելով, որ ՀՀ ԳԱԱ-ն Չինաստանի տարբեր գիտական կազմակերպությունների հետ ունի կնքված բազմաթիվ պայմանագրեր: ՀՀ ԳԱԱ նախագահը շեշտեց էլեկտրոնային նախագծման ավտոմատացման ոլորտում հետազոտությունների խթանման կարևորությունը, ինչը կարող է նշանակալի դեր ունենալ Հայաստանի գիտական և տեխնոլոգիական զարգացման համար:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ-ն խորացնում է համագործակցությունը Բելգիայի Թագավորության Գենտի համալսարանի հետ

Ս/թ. մարտի 19-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունում տեղի ունեցավ հանդիպում Բելգիայի Թագավորության Գենտի համալսարանի պատվիրակության հետ: Պատվիրակության կազմը գլխավորում էր Գենտի համալսարանի ռեկտորի տեղակալ Միկե վան Հերեվեգեն: Հյուրերին ողջունեց ՀՀ ԳԱԱ փոխնախագահի ժամանակավոր պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Պապոյանը: Նա նշեց, որ ուրախ են ՀՀ ԳԱԱ-ում հյուրընկալել աշխարհում բարձր վարկանիշ ունեցող համալսարաններից մեկի՝ Գենտի համալսարանի ներկայացուցիչներին: Արամ Պապոյանն ասաց. «ՀՀ ԳԱԱ-ն հիմնադրվել է 80 տարի առաջ և մինչև հիմա Հայաստանի գիտական հետազոտությունների իրականացման հիմնական համակարգն է: Ակադեմիան միավորում է շուրջ 30 գիտահետազոտական ինստիտուտ: Ունի շուրջ 3800 աշխատակից: Միջազգային համագործակցությունը շատ կարևոր է ակադեմիայի համար: Մեր սկզբունքներից է միջազգային համագործակցության խթանումը, և ես ուրախ եմ տեսնել, որ մենք նվազագույնը 3 իրականացվող նախագիծ ունենք, որոնք կապում են մեզ ձեր համալսարանի հետ: Ես հույս ունեմ, որ այսօրվա հանդիպումից հետո մենք կընդլայնենք և կխորացնենք մեր համագործակցությունը»:

«Ուրախ եմ, որ մեր համալսարանի հետ ՀՀ ԳԱԱ-ն ունի որոշ համագործակցություն: Գենտի հա-

մալսարանը հիմնադրվել է 1817 թ.-ին: Մեր համալսարանում հետազոտություններ են իրականացվում գիտական բոլոր ուղղություններով: Ունենք շուրջ 50 հազար ուսանող, 11 ֆակուլտետ, աշխատակազմը՝ 15 հազար: Մենք միշտ ուրախ ենք միջազգային համագործակցության համար»,- ասաց Միկե վան Հերեվեգեն:

Գենտի համալսարանի հետ իրենց համագործակցության ծրագրերը ներկայացրին ՀՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի ավագ գիտաշխատող Ալլա Ալեքսանյանը, ՀՀ ԳԱԱ Արամ Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի հետազոտական խմբի ղեկավար Պայծառ Մանթաշյանը, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ Մարիա Օհանյանը: ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյանը ներկայացրեց բաժանմունքի ինստիտուտների գիտական գործունեությունը և առաջարկեց համագործակցել բնական գիտությունների ոլորտում:

Գենտի համալսարանի «Eureast Platform»-ի համակարգող Աննա Սաշչենկոն ներկայացրեց համալսարանի հետազոտական ծրագրերին մասնակցելու հնարավորությունները:

Կողմերը պայմանավորվեցին խորացնել համագործակցությունը և փոխանակեցին հուշանվերներ:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

«Հայոց պատմության» ակադեմիական բազմահատորյակի առաջին հատորի երկրորդ գրքի շնորհանդեսը



Ս/թ. մարտի 18-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակի առաջին հատորի երկրորդ գրքի շնորհանդեսը: Հատորի ստեղծմանը մասնակցել են Հին Հայաստանի պատմության տարբեր բնագավառների առաջատար գիտնականներ: Պատասխանատու խմբագիրն է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պ. գ. դ., պրոֆ., ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը: Այս հրատարակությունն ունի գիտաքաղաքական մեծ նշանակություն: Հայ ժողովրդի պատմության նախորդ ակադեմիական բազմահատորյակի առաջին հատորը հրատարակվել էր ավելի քան կես դար առաջ՝ 1971 թվականին:

Հատորը ներառում է Ուրարտուի (Բիայնիլի, Արարատի, Վանի), Երվանդունիների թագավորությունների, Արտաշեսյանների գահակալումից մինչև Տրդատ Գ Մեծ Արշակունու օրոք քրիստոնեության ընդունման ժամանակաշրջանների պատմությունը՝ ընդգրկելով նաև տվյալ դարաշրջանների միջազգային հարաբերությունները, սոցիալ-տնտեսական, մշակութային, գաղափարաբանական և մի շարք այլ հիմնահարցեր: Գիրքը շարադրված է հարուստ աղբյուրագիտական, հնագիտական պեղումների արդյունքում ստացված տեղեկությունների և գիտական գրականության համակողմանի օգտագործմամբ:

Գրքի բովանդակության կազմման և պատրաստման գործում կարևոր դեր է ունեցել հայ վաստակաշատ պատմաբան, լուսահոգի Արտակ Մովսիսյանը: Խմբագրման աշխատանքների իրականացման գործում մեծ աշխատանք է կատարել Պատմության ինստիտուտի Հին դարերի բաժինը: Պատասխանատու խմբագրի տեղակալն է նույն բաժնի աշխատակից Վահե Սարգսյանը:

Գրքում որոշակիորեն խմբագրվել և ընդգրկվել են նաև խորհրդային տարիներին հրատարակված նախորդ հատորի մի շարք հայ մեծանուն գիտնականների աշխատություններ, ինչը մատնանշում է խոր ակնածանքն ու արժևորումն ինչպես նախորդ հատորի, այնպես էլ նրա հեղինակների նկատմամբ:

Շնորհանդեսի ժամանակ բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը: Այնուհետև հատորի համահեղինակներից պ.գ.դ. Երվանդ Գրեկյանը, պ.գ.թ. Սիմոն Հմայակյանը, պ.գ.թ. Ռուսլան Ցականյանը, պ. գ. դ. Հայկ Ավետիսյանը, պ.գ.դ. Ռուբեն Մանասերյանը, պ.գ.թ. Գոհար Վարդումյանը ներկայացրին իրենց կողմից շարադրված բաժինների և ընդհանրապես այս ակադեմիական աշխատության մյուս հատվածների կարևորությունը, արդիականությունն ու օգտագործված բազմաթիվ նորովի մոտեցումներն ու հարցադրումները:

Շնորհանդեսի ժամանակ ելույթներ ունեցան ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պ.գ.դ. Կարեն Խաչատրյանը, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պ. գ. թ. Մխիթար Գաբրիելյանը, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան, պ.գ.թ. Էդգար Հովհաննիսյանը, ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.դ. Էդիկ Մինասյանը, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.թ. Էդիկ Գևորգյանը, ՀՀ ԳԱԱ փոխնախագահի ժամանակավոր պաշտոնակատար, պ.գ.դ., ԳԱԱ թղթակից անդամ Պավել Ավետիսյանը, ինչպես նաև՝ Պատմության ինստիտուտի մի շարք աշխատակիցներ: Եզրափակիչ ելույթով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Յուրի Սուվարյանը: Նա մասնավորապես նշեց, որ ավարտին են մոտենում «Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակի առաջին հատորի առաջին գրքի պատրաստման աշխատանքները, որն իրականացվում է Պատմության ու Հնագիտության և ազգագրության ինստիտուտների համատեղ ջանքերով:

Շնորհանդեսի ժամանակ ներկաների կողմից հատուկ ընդգծվեց այն հանգամանքը, որ տասնյակ տարիներ անց սեղանին է դրվել նոր մոտեցումներով ու հարցադրումներով հագեցած մի բազմաբովանդակ ակադեմիական աշխատանք, որտեղ ակներև մատնացույց են արվում Հին Հայաստանի պետականության տարբեր ժամանակաշրջանների շարունակականությունն ու ժառանգականությունը:

Միքայել ԲԱԴԱԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, պ.գ.թ.

Աշոտ ՄԵԼՔՈՆՅԱՆ. «Ադրբեջանն օրեցօր ավելի ագրեսիվ է դառնում...»

Ադրբեջանը մի կողմից հայտարարում է, որ Հայաստանի հետ ավարտել է «խաղաղության պայմանագրի» կետերի շուրջ բանակցությունները՝ համաձայնեցնելով բոլոր 17 կետերը, մյուս կողմից էլ մեկ օրում երեք պաշտոնական հաղորդագրություն է տարածում՝ ՀՀ զինված ուժերին մեղադրելով իբր սահմանին սադրանքի դիմելու մեջ, ինչը հերքեցին ՀՀ պաշտպանության նախարարությունը և հայ-ադրբեջանական սահմանին տեղակայված ԵՄ դիտորդական առաքելությունը:

Ադրբեջանն այսպե՞ս է պատրաստվում խաղաղության, ի՞նչ է տալու Հայաստանին «խաղաղության պայմանագիր» կոչված փաստաթուղթը, որն արդեն վերանվանվել է՝ դառնալով խաղաղության համաձայնագիր:

ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի խոսքով փաստաթուղթն Ադրբեջանին հետ չի պահելու իր նպատակներից: Ավելին, Ադրբեջանը կարողացավ հասնել երրորդ կողմի՝ անվտանգության երաշխավորների բացառման տարբերակին: Այսինքն՝ բանակցությունները դարձան ուղղակի հայ-ադրբեջանական:

«Մի կողմից՝ թվում է, թե սա դրական է, բայց մյուս կողմից, երբ Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականության դեպքում չկա որևէ երաշխավոր, բնականաբար այս պայմաններում խոսել այդ փաստաթղթի իրական անվտանգության երաշխիք լինելու մասին ուղղակի ճիշտ չէ»,- 168.am-ի հետ զրույցում նշեց Աշոտ Մելքոնյանը:

Ինչ վերաբերում է թուրք-ադրբեջանական տանդեմի վաղեմի ծրագրերին ու հայտարարություններին՝ կապված, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցք» բացելու հետ, Աշոտ Մելքոնյանը նկատեց՝ նույնիսկ այդ փաստաթղթի ստորագրումից հետո չկա որևէ երաշխիք, որ Թուրքիան ու Ադրբեջանը հետ կկանգնեն իրենց այդ ծրագրից:

«Պատմության մեջ ես մեկ դեպք գիտեմ, որը, այսպես կոչված՝ «Դանցիգի» կամ «Գդանսկի միջանցքն» է, որ Գերմանիան պահանջում էր Լեհաստանից, որպեսզի դուրս գար Արևելք, և այդ պահանջի վերջը եղավ Համաշխարհային պատերազմը: Եթե գոյություն ունի միջազգային օրենք, որի համաձայն՝ որևէ երկրի նկատմամբ գործողություն իրականացնելիս դու միջամտում ես նրա ներքին գործերին, դա նշանակում է ագրեսիվ գործողություն:

Վերցնենք, օրինակ, Առաջին համաշխարհային պատերազմի սկսման առիթներից մեկը՝ Ավստրիայի գահաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի սպանությունը: Ավստրիացիները պահանջում էին, որպեսզի մտնեն Սերբիայի տարածք և այնտեղ իրականացնեն քննություն, դա նշանակում էր՝ այլ երկրի մարմիններ մտնեին տվյալ երկրի տարածք և նրա սուվերենությունը դարձնեին առ ոչինչ:

Եթե ադրբեջանական տրանսպորտային միջոցներն անարգել մտնեն Հայաստանի տարածք, սա նշանակում է, որ Հայաստանի սուվերենություն այլևս գոյություն չունի: Ադրբեջանը սրա մասին հստակ հայտարարում է, որ այդ ճանապարհը պատկերացնում է ուղղակի «միջանցքի» տարբերակով, որի իմաստը հետևյալն է, որ կարող է Ադրբեջանի արևելյան շրջաններից անարգել անցնել դեպի Նախիջևան: Նրա առջև որևէ արգելք չի լինելու կամ չի կարող տեղի ունենալ որևէ մաքսային զննում»,- շեշտեց Աշոտ Մելքոնյանը:

Ըստ նրա՝ այս պայմաններում խոսել ՀՀ սուվերենության մասին ավելորդ է, ուստի չպետք է որևէ խոսք լինի այդ միջանցքի մասին, որը կապված է նաև Հայաստանի գոյության հետ:

Աշոտ Մելքոնյանը խոսեց նաև վերջերս ՀՀ իշխանության հրավերով Հայաստան ժամանած թուրքական 10 լրատվամիջոցների ներկայացուցիչների ու Նիկոլ Փաշինյանի հարցազրույցի մասին՝ շեշտելով՝ նորություն չէ, որ տարբեր ժամանակներում հայ ղեկավարները հարցազրույցներ են տվել թուրքական լրատվամիջոցներին, սակայն չի եղել որևէ դեպք, որ Հայաստանի հրավերով թուրք լրագրողներ գան Հայաստան ու հարցազրույց անցկացնեն երկրի ղեկավարի հետ:

«Ենթադրում եմ, որ երկրի իշխանավորները կարծում են՝ հարևանների նկատմամբ որքան զգուշավոր, զիջողական դիրքերից քաղաքականություն վարեն, այնքան ավելի ապահով կլինի, ու պատերազմից երկիրը կխուսափեն: Իհարկե, այդպես չէ, որովհետև այդ լրագրողների հետ հանդիպումով չէ, որ Թուրքիան կամ Ադրբեջանը Հայաստանի նկատմամբ իրենց ագրեսիվ նկրտումները կարող են չարտահայտել:

Այդ զգուշությունը հասկանում եմ, բայց կյանքը ցույց է տվել, որ դա ամենևին արդյունքի չի կարող բերել: Որպես պատմաբան՝ կարող եմ ասել, որ Թուրքիայի մոտեցումները չեն փոխվել, և ժամանակի ընթացքում միշտ էլ ամեն մի հաջողություն գրանցելուց հետո ավելի պահանջատեր ու ագրեսիվ են դառնում»,- նշեց Աշոտ Մելքոնյանը:

Պատմաբանը հիշեցրեց, որ հատկապես վերջին տարիներին Թուրքիան Հայաստանի հետ իր ամբողջ քաղաքականությունը մշտապես կառուցել է հայ-ադրբեջանական հարաբերությունների համատեքստում և իր բոլոր գործողությունները համաձայնեցրել է Ադրբեջանի հետ:

«Ադրբեջանն օրեցօր ավելի ագրեսիվ է դառնում, և, բնականաբար, որևէ ակնկալիք չունեմ»,- ընդգծեց Աշոտ Մելքոնյանը:

(168.am, 17 մարտի, 2025)

«Ադրբեջան պետության առաջացումը և ադրբեջանցիների էթնոգենեզի խնդիրը» գրքի շնորհանդեսը



Ս/թ. մարտի 6-ին ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող Անուշ Հարությունյանի «Ադրբեջան պետության առաջացումը և ադրբեջանցիների էթնոգենեզի խնդիրը» գրքի շնորհանդեսը: Գիրքը հրատարակվել է «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի աջակցությամբ:

Հայ գիտական շրջանակներում նմանատիպ առաջին աշխատությունն է՝ նվիրված Ադրբեջան պետության պատմությանը:

Իր ելույթում աշխատության կարևորությունը շեշտեց «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի հետազոտող, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Գոռ Մարգարյանը:

«Մենագրության մեջ փաստական հիմքով լուսաբանվում է այն կարևոր դրվագը, երբ առաջացման օրվանից ի վեր ադրբեջանցին կառուցեց իր ինքնությունն առավելապես հակահայկականության հենքի վրա: Այսօրինակ հետազոտությունները կյանքի պիտի կոչվեն՝ նորերին հենք լինելու համար, պիտի հրատարակվեն՝ դիվանագետի ու պատմաբանի զինանոցը հարստացնելու համար, տարածաշրջանի պատմությունն ուսումնասիրող ուսանողից մինչև հետազոտող գիտնականի համար»,-մասնավորապես ասաց Գոռ Մարգարյանը:

Մենագրության հիմքում Անուշ Հարությունյանի թեկնածուական ատենախոսությունն է, գիտական ղեկավարը, ինչպես նաև գրքի խմբագիրը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Քրիստոնյա Արևելքի բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Ալեքսան Հակոբյանն է:

«Ինձ համար շատ կարևոր է աղբյուրագիտական ճշգրտությունը, և այստեղ ես տեսնում եմ, որ այդ ճշգրտությունը կա: Մենք ադրբեջանցիներին գիտական մակարդակով ենք ցույց տալիս՝ ով ով է, ինչն ինչ է: Այն խնդիրները, որոնք դրվել են, լուծվել են մեծ հաջողությամբ, և ես հույս ունեմ, որ այս աշխատանքները կշարունակվեն»,-նշեց Ալեքսան Հակոբյանը:

Մենագրության հեղինակ Անուշ Հարությունյանը նշեց, որ Ադրբեջանի պետականության ծագման և ադրբեջանցի էթնոսի կազմավորման ուսումնասիրությունն ունի առանձնահատուկ նշանակություն, քանի որ Ադրբեջանը սեփական պետության առաջացման պատմությունը ցանկանում է կերտել հայ և հարևան այլ ժողովուրդների հաշվին, սպառնում է յուրացնել հարևան և առաջին հերթին հայ ժողովրդի ու Հայաստանի պատմամշակութային ժառանգությունը:

«Մենագրությունը փորձ է խորը և բազմակողմանի վերլուծելու պատմական, քաղաքական և աշխարհաքաղաքական այն բարդ գործընթացները, որոնք հանգեցրին Ադրբեջանի՝ որպես պետության ձևավորմանը: Հետազոտությունն ընդգրկում է հիմնականում 1918-1939 թվականները, որոնք կարելի է համարել Ադրբեջանի պետականության ձևավորման առավել կարևոր փուլը:

Մենագրության շրջանակում քննարկվում են երկու առանցքային հարցեր՝ Արևելյան Այսրկովկասի տարածքում «Ադրբեջան» անվամբ անկախ պետության ստեղծման պատմաքաղաքական հանգամանքներն ու այդ պետության ներսում տիտղոսակիր ժողովրդին «ադրբեջանցի» անվանելու գործընթացները»,- ներկայացրեց հեղինակը:

Գրքում ներառված են արխիվային 50 ֆոնդերի մի քանի հարյուր արխիվային փաստաթղթեր, փաստաթղթային ժողովածուներ, հուշագրություններ, ժամանակակիցների վկայություններ, նաև բազմալեզու՝ ռուսերեն, անգլերեն, թուրքերեն, ադրբեջաներեն գրականություն: Աշխատանքի փաստագրական հիմքը կազմում են Հայաստանի ազգային արխիվի, Ռուսաստանի Դաշնության պետական արխիվի և Սոցիալ-քաղաքական պատմության ռուսական պետական արխիվի՝ ուսումնասիրվող խնդիրներին վերաբերող փաստաթղթերը:

Գիրքը կարող է կիրառական նշանակություն ունենալ ինչպես Ադրբեջանի պատմության առանձին դրվագների հետազոտման, այնպես էլ ադրբեջանական կեղծարարության հակադարձման առումով, քանի որ այն լուսաբանում է ադրբեջանցի էթնոսի կազմավորման ոչ վաղ անցյալի առանցքային փուլերը: Քննության արդյունքները կարող են կիրառվել գիտահետազոտական այլ աշխատանքներում, դիվանագիտության, քաղաքագիտության ոլորտներում:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Ադրբեջանցիներն Ամարասի վանական համալիրը ներկայացնում են աղվանական, սակայն իրականությունն այլ է

Միջնադարյան Հայաստանի ամենանշանավոր վանական համալիրներից մեկն Ամարասն է: Ըստ 5-րդ դարի պատմիչ Փավստոս Բուզանդի՝ Ամարասի Սուրբ Գրիգորիս եկեղեցին 4-րդ դարի սկզբին կառուցել է Գրիգոր Լուսավորիչը, իսկ ավարտին է հասցրել նրա թոռը՝ Գրիգորիսը, ում, ըստ հայ պատմագիր Մովսես Կաղանկատվացու, հուղարկավորել են եկեղեցու արևելյան կողմում: 5-րդ դարի սկզբին Մեսրոպ Մաշտոցն այստեղ է հիմնել Արցախի առաջին դպրոցը: Ամարասը եղել է Արցախ-Ուտիք երկրամասի հոգևոր և եպիսկոպոսանիստ կենտրոններից մեկը: Դարերի ընթացքում վանքը մի քանի անգամ ավերվել է օտար նվաճողների կողմից: 15-16-րդ դարերում այստեղ գրվել և ընդօրինակվել են հայերեն բազմաթիվ ձեռագիր մատյաններ: 2023 թվականի սեպտեմբերին Ամարասն օկուպացվել է ադրբեջանական զինուժի կողմից:

Անհնար է պատկերացնել, թե ինչպես կարող է Արցախի և Ուտիքի հայության հոգևոր-մշակութային կենտրոններից մեկը՝ Ամարասը, լինել «աղվանական» մշակութային կառույց, երբ անգամ դուրս էր Բուն Աղվանքի տարածքից:

«ԳԵՂԱՐԴ» Գիտավերլուծական հիմնադրամ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի 2024 թ. գիտական արդյունքները

2024 թ. ընթացքում շարունակվել են «Հայ հնագիտության, ազգագրության և բանագիտության արդի և հեռանկարային զարգացման խնդիրներ» ծրագրով ինստիտուտի ուսումնասիրությունները: Գիտահետազոտական և գիտակազմակերպչական աշխատանքները տարվել են 11 ուղղություններով՝ Ա. հիմնարար և կիրառական հետազոտություններ, Բ. դաշտային հնագիտական հետազոտություններ (պեղումներ), ազգագրական և բանահյուսական հավաքչական գիտարշավներ, Գ. մշակութային արժեքների վերականգնում, վավերագրում և թանգարանացում, Դ. անալիտիկ լաբորատոր հետազոտություններ, Ե. գեոդեզիական-քարտեզագրական և ճարտարապետական-չափագրական աշխատանքներ, Զ. արխիվային նյութերի մշակում և ուսումնասիրություն, Է. միջազգային համագործակցություն, Ը. գիտական ուսումնասիրությունների հրատարակում, Թ. կադրերի պատրաստում և վերապատրաստում, Ժ. գիտաժողովների, սեմինարների և կլոր սեղանների կազմակերպում և ԺԱ. պեղվող հուշարձանների պահպանության կազմակերպում, կոնսերվացման և թանգարանացման աշխատանքներ:

Նշված ծրագրերն իրականացվել են նմանապես 11 ենթածրագրերով, որոնք արտացոլում են մեր ինստիտուտի հիմնական գիտական ուղղությունները՝ հնագիտություն, վիմագրություն, ազգագրություն, էթնոսոցիոլոգիա, բանագիտություն և հնակենսաբանություն:

Արտաշատի նորահայտ եկեղեցու հատակագիծը

«Հնագույն և հին Հայաստանի հնագիտական սկզբնաղբյուրների պեղումներ և ուսումնասիրություն» ենթածրագրով (ղեկ.՝ պ.գ.թ. Ա. Բոբոխյան) էական արդյունքներ են ձեռք բերվել հնագույն Հայաստանի նյութական և հոգևոր մշակույթի հետազոտության վերաբերյալ: 2024 թ. պեղվել և ուսումնասիրվել է ՀՀ տարածքի 27 հուշարձան, որոնք ընդգրկում են ժամանակագրական ողջ սեկվենցիան՝ ստորին պալեոլիթից մինչև ուշ միջնադար:

Պ.գ.թ. Ս. Հոբոսյանի ղեկավարությամբ իրականացվող «Ավանդականը և նորը Հայոց մշակույթում. պահպանման և զարգացման խնդիրներ» ենթածրագրի շրջանակում հետազոտություններ են իրականացվել երկու ուղղություններով՝ ավանդական (տնտեսության վարման եղանակներ, համայնք, ուտեստ), խորհրդային և հետխորհրդային Հայաստանում տեղի ունեցող սոցիալ-մշակութային զարգացումների ուսումնասիրություն: Լույս է տեսել Երվանդ Լալայանի «Երկերի» 5-րդ հատորը:

Պ.գ.թ. Լ. Աբրահամյանի ղեկավարությամբ «Առօրեականությունն անցյալում և ներկայում. մարդաբանական ուսումնասիրություն» ենթածրագրով շարունակվել են հետազոտությունները «Վիզուալ մարդաբանության», «Հիշողության մարդաբանության» և «Խորհրդային և հետխորհրդային առօրեականության» թեմաներով: Սրանց մեջ հատուկ ուշադրություն է դարձվում փոփոխվող իրողություններին (արցախցիների շրջափակում, բռնագաղթ), որոնք, որակավորվելով որպես տրավմատիկ հիշողություն, դառնում են առանձին հետազոտության նյութ:

«Հայ բանահյուսական մշակույթի համեմատական և տիպաբանական ուսումնասիրություն» ենթածրագրով, որը ղեկավարում է բ.գ.թ. Տ. Դալալյանը, շարունակվել են իրականացվել բանահյուսական նյութի գրառումներ և դասակարգում, բանաձևային ժանրերի գիտական համահավաքների կազմում, միջին և մեծ (վիպական) ժանրերի համեմատական բանագիտական վերլուծություն և բնագրերի հրատարակում, միջգիտակարգային ուսումնասիրություններ: Լույս է տեսել «Շիրակ. հայոց բանահյուսական մշակույթը» ժողովածուն:

«Հայկական հրաշապատում հեքիաթների հիմնական մոտիվների ու դիպաշարերի զուգադրական ուսումնասիրություն» ենթածրագրով (ղեկ.՝ բ.գ.դ. Թ. Հայրապետյան) հրատարակության են պատրաստվում «Հայկական ժողովրդական հեքիաթներ» (ՀԺՀ) շարքի «Ռշտունիք» և «Բուլանըխ» հատորները: Ավարտին են հասցվել «Շատախ» հատորի հեքիաթների մշակման, համապատասխանեցման և անգլերեն թարգմանության աշխատանքները:

Պ.գ.թ. Մ. Գալստյանի ղեկավարությամբ «Սոցիալ-մշակութային գործընթացները Հայաստանում (Ավանդույթ և արդիականություն)» ենթածրագրով լույս են տեսել «Պատմություն և հիշողություն. Արցախյան երկրորդ պատերազմի հուշարծանացման խնդիրները» գիրքը (հեղինակներ՝ Գ. Աթանեսյան, Մ. Գալստյան, Գ. Հակոբյան, Լ. Անգելուշ) և Գ. Հակոբյանի «Սիրիահայերի սոցիալ-մշակութային ադապտացիան Հայաստանում» մենագրությունը:

«Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» ենթածրագրով (ղեկ.՝ պ.գ.թ. Ռ. Կարապետյան) իրականացվել են Սփյուռքի հետազոտության համար անհրաժեշտ մեթոդաբանության մշակումներ, տարբեր էթնոսոցիալական միջավայրերում կենսագործող հայերի ծրագրային հետազոտության մեթոդների հստակեցում և գործիքակազմի փորձարկում. աշխատանքն իրականացվել է տարբեր երկրների (Ֆրանսիայի, Չեխիայի, Լիբանանի, Իրանի, Վրաստանի, Ուկրաինայի, Կիպրոսի և ԱՄՆ-ի) տասը մայրաքաղաքներում և մեծ քաղաքներում բնակվող հայերի ուսումնասիրության հենքի վրա, միջգիտակարգային (ժողովրդագրություն, սոցիոլոգիա, հոգեբանություն, ազգաբանություն, մաթեմատիկական մոդելավորում, ինֆորմատիկա) մեթոդաբանական սկզբունքների կիրառմամբ: Ամրապնդվել և նոր գիտական կապեր են ստեղծվել Չեխիայի, ՌԴ-ի, Ուկրաինայի, Լիբանանի, Լեհաստանի և Վրաստանի առաջատար գիտական հաստատությունների և անհատ գիտնականների հետ:

Պ.գ.դ. Հ. Պետրոսյանի ղեկավարությամբ գործում է «Արցախի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրություն» ենթածրագիրը, որով շարունակվել են հետազոտվել Արցախի տարածքի հնագիտական հուշարձաններին, եկեղեցիներին և վանքերին վերաբերող խնդիրները: Շարունակվում է Տիգրանակերտի երկարամյա պեղումների արդյունքներն ամփոփող մենագրության շարադրանքը: Կատարված աշխատանքների մեջ հատուկ նշելի են Ն. Երանյանի կողմից եվրոպական թանգարաններում պահվող, Արցախից տեղափոխված հնագիտական նյութերի վավերացումը և թվայնացումը:

«Համայնքների հոգևոր (կրոնական) կյանքի ազգագրական և մշակութաբանական ուսումնասիրություն» ենթածրագրով (ղեկ.՝ պ.գ.թ. Լ. Սիմոնյան) իրականացվում են հայոց և ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների հոգևոր կյանքի ուսումնասիրությունները:

Ինչ վերաբերում է ՀՀ տարածքում պեղված հուշարձաններին, ապա դրանց թվում կարևորվում է «Դեբեդավան» նորահայտ բնակատեղին, որը գտնվում է Տավուշի մարզում՝ Փամբակի լեռնաշղթայից հյուսիս՝ Կուր գետի ավազանում: Հնագետ Լ. Աղիկյանի ղեկավարությամբ պեղվող հնավայրը 14C տվյալներով թվագրվում է մ.թ.ա. 6-րդ հազարամյակով և համարվում է Հայաստանի առաջին նեոլիթյան հուշարձանը: Հնավայրի պահպանվածության բարձր աստիճանը թույլ է տալիս այն համարել հեռանկարային միավոր ուսումնասիրությունների համար: Կարևոր արդյունքներ են գրանցվել Վ. Մելիքյանի ղեկավարությամբ Արարատի մարզի Տիգրանաշեն-1 հնավայրի պեղումներով: Արձանագրվել է միջին բրոնզի դարի թռեղք-վանաձորյան մշակույթի բնակատեղ՝ կառուցապատման մանրամասներով, ինչը լրացնում է մեր պատկերացումներն այդ դարաշրջանի մասին, որ ձևավորվել է առավելապես դամբարանների պեղումների արդյունքների հիման վրա: Հնագետ Գ. Սարգսյանի ղեկավարությամբ մեկնարկել են Սյունյաց արքաների դղյակի պեղումները Կապանում, որը մինչ օրս անհայտ մնացած աշխարհիկ մոնումենտալ համալիրի փաստագրման և արժևորման նշանակալի օրինակ է: Հատկապես ուշագրավ են Արտաշատ մայրաքաղաքն ուսումնասիրող հայ-գերմանական արշավախմբի պեղումներով ստացված նոր տվյալները, որոնք լույս են սփռում Հայաստանի անտիկ շրջանի մայրաքաղաքի տարաբնույթ սոցիալ-մշակութային գործընթացների վրա՝ բացահայտելով այդ հռչակավոր կենտրոնի՝ Մետաքսի ճանապարհով իրականացվող ընդարձակ առևտրային կապերն ու Մերձավոր Արևելքում նրա քաղաքական և մշակութային դերակատարության մանրամասները: Արտաշատի 17-րդ բլրի արևելյան լանջին 2024 թ. բացվել են մոտ 1000 քմ մակերեսով ուքանկյուն եկեղեցու հիմնապատերը: Ըստ ստացված ռադիոածխածնային տվյալների՝ այս կառույցը վերաբերում է 4-րդ դարի առաջին կեսին և փաստորեն Հայաստանի հնագիտորեն փաստագրված վաղագույն եկեղեցին է: Այդ

Արուճի միջնադարյան ամրոցի պեղումները

հայտնագործությունը գալիս է էապես լրացնելու Հայաստանում քրիստոնեության տարածման մեխանիզմների մասին մեր պատկերացումները (ղեկ.՝ պ.գ.թ. Մ. Զարդարյան):

2024 թ. ինստիտուտը մասնակից եղավ տարբեր գիտական միջոցառումների, որոնք կազմակերպված էին ՀՀ ԳԱԱ-ի, ԿԳՄՍ նախարարության, այլ կառույցների և ինստիտուտի կողմից: Հանրային ռադիոյի և հեռուստատեսության համար պատրաստել և խմբագրել ենք հաղորդաշարեր: ՀՀ պատմամշակութային հուշարձանների՝ UNESCO-ի համաշխարհային մշակութային ժառանգության նախնական և հիմնական ցանկերում ընդգրկելու դիմում-հայտեր ենք ներկայացրել:

ՀՀ ԿԳՄՍՆ նախարարին կից ոչ նյութական մշակութային ժառանգության հարցերի մասնագիտական խորհրդի քննարկմանն է ներկայացվել ՀՀ Անհապաղ պաշտպանության կարիք ունեցող և կենսունակ ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկում ընդգրկվելու 4 հայտ:

Ինստիտուտում պարբերաբար կազմակերպվել են տարբեր թեմաներով սեմինարների շարքեր, որոնց մասնակցել են նաև Հայաստանի այլ գիտական հաստատությունների և արտասահմանյան հրավիրյալ մասնագետներ: Ինստիտուտի աշխատակիցները մասնագիտական կարծիքներ, գրախոսություններ են տրամադրել Հայաստանի և արտերկրի վարկանիշային ամսագրերում տպագրվող հոդվածների համար:

Արսեն ԲՈԲՈԽՅԱՆ
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Համագործակցության պայմանագիր

Ս/թ. փետրվարի 25-ին համագործակցության պայմանագիր է կնքվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի և Իտալիայի Միջերկրածովյան և արևելյան հետազոտությունների ասոցիացիայի (ISMEO) միջև:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանն իր խոսքում ընդգծել է նման համագործակցության անհրաժեշտությունն ու կարևորությունը: Իր հերթին ISMEO-ի ներկայացուցիչ, անվանի հետազոտող դոկտոր Ռոբերտո Դանը ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանին է փոխանցել ISMEO-ի նախագահ պրոֆեսոր Ադրիանո Ռոսսիի ջերմ ողջույններն ու բարեմաղթանքները և խիստ արժևորել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հետ համագործակցության նշանակությունը:

Համագործակցության պայմանագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել համատեղ հետազոտություններ, գիտաժողովներ, հրատարակություններ, փորձի փոխանակում և մի շարք կարևոր ակադեմիական այլ ծրագրեր:

Ակադեմիական նոր հրատարակություններ

1. «Հայոց պատմություն», առաջին հատոր, երկրորդ գիրք:
2. Ա. Արևշատյան - Տիգրան Մանսուրյան:
3. «Բանբեր հայագիտության», 2024 թ., N 3:
4. Ա. Ճուղուրյան, Ա. Մխիթարյան - Գիտության կազմակերպում և կառավարում (ուսումնական ձեռնարկ):
5. «Отчет о состоянии Карсской области начальника Карсской области генерал-лейтенанта Ивана Попко - 1878 г.» (կազմող ՝ Հ. Մուրադյան):
6. Ս. Համբարձումյան – Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի բառապաշարը:
7. «Լեզու և լեզվաբանություն», 2024 թ., N 2:
8. Л. Даниелян - Магавуз.
9. Լ. Խաչատրյան - Լեզվաբանական ավանդույթներ, նոր և նորագույն ուղղություններ (մ.թ.ա. IV հազարամյակից մինչև XXIդ.):
10. «ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տեղեկագիրք - 2024»:

Խմբագրության կողմից -Լրացավ վաստակաշատ արվեստաբան, պատմաբան, գրականագետ, թարգմանիչ, Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Ալեքսեյ Կարապետի Ջիվելեգովի ծննդյան 150-ամյակը (1875 թ. մարտ-1952 թ. դեկտեմբեր)։ Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում ակադեմիկոս Ռուբեն Զարյանի հուշերից մի հատված, որը տպագրվել է նրա «Մայրամուտից առաջ։ Ինքնապատում» գրքի 3-րդ հատորում (2012 թ.)

ՋԻՎԵԼԵԳՈՎԸ

Գիտնականներ կան, որ, շրջապատված գրքերով ու թղթերով, հետազոտում են որևէ հարց և ընթերցողին են հայտնում տարիների անխոնջ ուսումնասիրության արդյունքը: Այդպիսի գիտնականները հասարակության մեջ քիչ են երևում և եթե պատահում է, որ լքեն իրենց աշխատասենյակը, ապա այն պատճառով միայն, որպեսզի գնան արխիվ, գտնեն հարկավոր փաստաթղթերը և վերականգնեն անցածգնացած դեմքերն ու դեպքերը: Նրանք մի կյանք ունեն, և այդ կյանքն ամբողջովին պատկանում է գիտությանը:

Դրանք գիտության քուրմերն են:

Գիտնականներ էլ կան, որ կարողանում են գիտական զբաղմունքը ներդաշնակել մանկավարժության հետ: Եվ, բացի աչքի ընկնող գիտնական կամ մանկավարժ լինելուց, հասարակական գործիչներ են: Չես էլ հասկանում, թե գիտությամբ զբաղվելու համար նրանք երբ են ժամեր գտնում:

Դրանք գիտության ասպետներ են:

Ահա այդպիսի գիտնականների թվին էր պատկանում Ալեքսեյ Կարպովիչ Ջիվելեգովը: Ռոստովում ծնված հայ, որն իր կրթությունը ստացավ Մոսկվայում, որտեղ և բազմակողմանի գործունեություն ծավալեց:

Պատմության շատ դեպքեր են հայտնի, երբ գիտնական մարդիկ, ջլատելով իրենց ուժերը, մասնատվել են, ցրել իրենց հնարավորությունները և, ոչ մի ասպարեզում չխորանալով, նշանակալի հետք չեն թողել իրենցից հետո:

Այդպես չէր Ջիվելեգովը:

Հիմա դժվար է ասել, թե նա ինչպես էր կարողանում ներդաշնակել գործունեության մի քանի ասպարեզ միաժամանակ: Եվ այդ բոլորը ոչ ի միջի այլոց: Բայց կարողանում էր:

Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր էր: Պրոֆեսոր էր նաև Մոսկվայի թատերական արվեստի ինստիտուտում: Եվ ինչպիսի՜ դասախոս: Ուրիշ դասերից խույս տվող ուսանողներն անպայման ներկա էին նրա դասախոսություններին: Նրան ունկնդրելն այնպիսի բավականություն էր, որ ֆիզիկոսներն ու մաթեմատիկոսները, բնագետներն ու աշխարհագրագետները, թողած իրենց դասերը, գալիս էին նրան լսելու: Միշտ շրջապատված էր աշակերտներով: Նա սիրում էր իր սաներին: Եվ աշակերտներն էլ ակնածում և պատկառում էին նրանից: Դժվար է հիշել գրականությանը կամ արվեստին, մանավանդ թատրոնին նվիրված հավաքույթ, որ Ալեքսեյ Կարպովիչը չհայտնվեր այնտեղ: Կոմիսարժևսկայային նվիրված երեկո՞ է, ուրեմն նա ամբիոնի մոտ է որպես հուշեր պատմող: Եթե հավաքույթը նվիրված է արևմտաեվրոպական գրականությանը, ուրեմն դասախոս է: Եթե արդի թատրոնի հարցերն են արծարծվում, ապա կրքոտ վեճերի մեջ է:

Միշտ եռանդով է գործել, որտեղ էլ եղել է, որ ասպարեզում էլ: «Արմյանսկի վեստնիկի» խմբագիրներից մեկը եղած ժամանակ լայն գործունեություն է ծավալել և այդ հանդեսի էջերում քաղաքացիական շեշտված կրքով պաշտպանել է հայկական դատը: Մեկ էլ տեսնում ենք նրան «Գրանատ» հանրագիտարանում՝ որպես այդ դժվար գործը գլխավորողներից: Բազմազբաղ այդ գիտնականը ժամանակ գտավ և մի շրջան դասախոսություններով հանդես եկավ Երևանի թատերական ինստիտուտում: Նա կապված էր հայկական գիտությունների ակադեմիայի աշխատանքների հետ՝ որպես նրա թղթակից անդամ:

Եվ դա չէր խանգարում, որ նա ասպարեզի վրա դներ գիրք գրքի հետևից, աշխատություններ, որոնցից յուրաքանչյուրը նոր խոսք էր գիտության մեջ: Այդպիսին էր, օրինակ, Դանթեին նվիրված նրա աշխատությունը, որով վերջ դրվեց մեծ բանաստեղծի գռեհիկ սոցիոլոգիական ըմբռնմանը, և «Աստվածային կատակերգության» հեղինակը ընթերցողի առաջ կանգնեց իր կենդանի նկարագրով, իր դարաշրջանի հետ ամուր կապված, իր հակասություններով ու թռիչքներով: Նույնպիսի գործեր են նաև Լեոնարդո դա Վինչիին և Միքելանջելոյին նվիրված գրքերը: Ջիվելեգովի հայտնի աշխատություններից է նաև իտալական ժողովրդական կոմեդիայի հարցի քննությանը նվիրված հետազոտությունը: Իտալական Վերածնության լավագույն գիտակը մեր երկրում Ջիվելեգովն էր: Նրա առաջին գիրքն այդպես էլ կոչվում է՝ «Իտալական Վերածնության ակնարկներ»:

Ջիվելեգովն իր խառնվածքով, ձգտումներով, մարդկային նկարագրով, իբրև ամբողջական և նպատակասլաց անհատականություն, ընդհանուր կողմեր շատ ուներ Վերածնության դարաշրջանի ու նրա մարդկանց հոգեբանության հետ: Ահա այդ ընդհանրությունն էլ ապահովում էր պատմականության այնպիսի խորունկ և սակավադեպ զգացողություն նրա աշխատանքներում, այնպիսի թափանցում, որի համար միայն գիտելիքներ ունենալը, թեկուզ և չափազանց հարուստ, բավական չէր լինի, եթե գիտնականը ի վերուստ գեղագետ, արտիստ չլիներ: Իսկ Ջիվելեգովը իսկապես արտիստ էր, գեղագետ:

Ջիվելեգովի հետաքրքրությունները դուրս էին գալիս իտալական շրջանակներից. նա գրել է Շեքսպիրի, Գոլդոնիի, Մառլոյի, Ռաբլեի, Բոմարշեի և ուրիշների մասին: Նրա գրչին է պատկանում նաև արևմտաեվրոպական թատրոնի պատմության դասընթացը, որ նա ստեղծել է իր աշակերտ, հետագայում նշանավոր թատերագետ, պրոֆեսոր Գր. Բոյաջիևի հետ: Ջիվելեգովի կարծիքով գիտությունը չի ստեղծվում մասնագետների համար միայն: Նա այն համոզմանն էր, որ հեռու պետք է մնալ ակադեմիական չոր ոճից, և անհրաժեշտ է հասնել այնպիսի պարզության, որ գիտական պրպտումների արդյունքները հետաքրքիր լինեն նաև ամենալայն շրջանակներին: Օժտված գրական հազվագյուտ ձիրքով՝ նա իր մասնագիտական ուսումնասիրությունների շարադրանքը տալիս էր այնպիսի վառ ու գունեղ ոճով, որ, գիտական անուրանալի արժեքներ լինելով, ընթերցվում էին գեղարվեստական գրքին հավասար բավականությամբ: Ուստի և ամենևին պատահական չէ, որ Ջիվելեգովի, ինչպես նաև նրա ժամանակակից հռչակավոր պատմաբան Տառլեի մասին հաճախ էր ասվում, թե ընթերցողը նրանց ամեն նոր գրքին սպասում է նույն անհամբերությամբ, ինչպես նշանավոր վիպասանի նոր վեպին:

Հիշում եմ, մի անգամ, դա 1946-ին էր, ոչ մեծ խմբով նրա տանն էինք՝ Մոսկվայի Բելինսկու փողոցի վրա: Տիգրան Շամիրխանյանն էր, Սարգիս Մելիքսեթյանը, Գուրգեն Ջանիբեկյանը: Ուրիշներ էլ կային: Նրանց հետ նաև ես: Ալեքսեյ Կարպովիչը մեզ դիմավորեց ժպիտը դեմքին: Պենսնեի հետևից նայում էին նրա բարի աչքերը: Թեև գլուխը ճերմակած, բեղն ու մորուքը՝ նույնպես, բայց տեսքն առույգ էր:

Սենյակում տեղ չկար: Ամեն տեղ գրքեր էին: Ոչ միայն գրապահարաններում, այլև սեղանի վրա, լուսամուտի գոգին, հատակին: Մի խոսքով՝ գրքեր, գրքեր… Պետք էր տեսնել, թե ինչպես էր բռնում գիրքը, այնքան սեր կար նրա մատների մեջ, խնամք, գուրգուրանք: Ասաց, թե հին գրքեր են ու պատմեց, թե ինչպես է ձեռք բերել: Եվ հետո ավելացրեց.

- Ինձանից հետո այս բոլորը թողնում եմ Երևանին:

Իր երիտասարդական տարիներին Ջիվելեգովը բախտ է ունեցել շփվելու այն ժամանակվա համբավավոր մարդկանց հետ: Պատմում են, որ 1910-ական թվականներին Ալեքսեյ Կարպովիչի կազմակերպած Սալոնի մշտական այցելուներից էին Ստանիսլավսկին, Նեմիրովիչ-Դանչենկոն և Վախթանգովը: Այստեղ է մեր Օվի Սևումյանը ծանոթացել Ստանիսլավսկու հետ: Այդ Սալոնում մեկ-մեկ երևացել են Ալեքսանդր Ծատուրյանը և Վահան Տերյանը, Ալեքսանդր Մյասնիկյանը և Պողոս Մակինցյանը:

Ջիվելեգովը վախճանվեց յոթանասունութ տարեկան հասակում: Բայց կան նրա գրքերը, հարուստ ժառանգություն, որ դեռ երկար ժամանակ իր գործը կտեսնի, մի գրականություն, որից դեռ շատ երիտասարդներ են գիտական պաշար քաղելու, ուղղություն ստանալու…

Երիտասարդ գիտնականի ամբիոն. Ստյոպա Պետոյան և Շողակաթ Դևրիկյան

Պատմաբան Ստյոպա Պետոյանը և արվեստաբան Շողակաթ Դևրիկյանը ճանաչվել են «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» շրջանակում իրականացվող «Հասարակական, հայագիտական և հումանիտար ոլորտներում հետազոտությունների մրցույթի» շահառուներ: Ծրագրի շրջանակում նրանք ներկայացրել են «Եվրոպայում տպված Գրիգոր Լուսավորչին ներկայացնող փորագրանկարները՝ որպես Եվրոպայի և Հայաստանի միջև մշակութային երկխոսության վկաներ» թեման:

Ուսումնասիրությունը նախատեսվում է իրականացնել միջգիտակարգային հետազոտության մեթոդաբանությամբ՝ պատմագիտության, արվեստաբանության և բանասիրության սահմաններում: Աշխատանքը թույլ կտա գտնել, ուսումնասիրել և գիտական շրջանառության մեջ դնել նոր փորագրանկարներ, որոնք կարող են լույս սփռել հայերի՝ միջնադարյան Եվրոպայում ունեցած հեղինակության, Կաթոլիկ և Հայ առաքելական եկեղեցիների դավանաբանական խնդիրների և միմյանց նկատմամբ ունեցած սպասելիքների և հավակնությունների վրա:

«Հայոց առաջին հայրապետին պատկերող փորագրանկարները ներկայացնում են ոչ միայն կրոնական ու աշխարհիկ թեմաներ, այլև արտացոլում են տպագրության կենտրոնների միջև կապերը, եվրոպական և արևելյան գեղարվեստական ազդեցությունները, ինչպես նաև պատվիրատուների պահանջներն ու ճաշակը: Նպատակ ունենք նաև փորագրանկարների գեղարվեստական վերլուծությամբ բացահայտել, թե ինչպես են եվրոպացի և հայ վարպետները պատմական և քաղաքական տարբեր հարցեր փոխանցել արվեստի լեզվով»,- ասում է Շողակաթ Դևրիկյանը:



«Գրիգոր Լուսավորչին ներկայացնող Եվրոպայում տպված այդ մեկէջյա պատկերները հետաքրքրական դրվագներ են միջնադարյան Հայաստանի պատմության ուսումնասիրության համար: Դրանք հայերեն արձանագրություններին զուգահեռ ունեին նաև լատիներեն, գերմաներեն, իտալերեն մակագրություններ: Պատկերին զուգահեռ օտար դիտողի համար եվրոպական լեզուներով լուսաբանվել են հայ ժողովրդի՝ դարերի խորքից եկող պատմության նշանակալի դրվագները»,- նշում է Ստյոպա Պետոյանը:

Հետազոտության իրականացման նպատակով երիտասարդ գիտնականներն այցելելու են Երուսաղեմի Հայոց պատրիարքություն և աշխատելու են Գալուստ Գյուլբենկյան գրադարան-մատենադարանում: Պատրիարքության հարուստ հավաքածուներում պահվում են բազում հնատիպ գրքեր, վավերագրեր, մեկէջյա պատկերներ, ձեռագրեր, սրբանկարներ և ծիսական առարկաներ, որոնք կօգնեն բացահայտելու հետազոտվող հարցի ուսումնասիրության նոր ուղիներ և տալու առկա հարցերի պատասխաններ:

«Մեր նպատակն է պատմահամեմատական մեթոդով և արվեստաբանական վերլուծությամբ վեր հանել Գրիգոր Լուսավորչին պատկերող մեզ հայտնի մեկէջյա առանձին փորագրանկարների պատկերագրական և գեղարվեստական փոփոխությունների դրդապատճառները և ներկայացնել, թե տպագիր այդ պատկերներն ինչպես են ազդել արվեստի այլ գործերի ստեղծման և գեղարվեստական հարդարանքի վրա: Նմանօրինակ ուսումնասիրություններն օգնում են ավելի խորությամբ հասկանալու, թե ինչպես են արվեստն ու կրոնը «օգտագործվել» որպես տարբեր ժողովուրդների միջև մշակութային և քաղաքական հաղորդակցման միջոց»,- ասում է Շողակաթ Դևրիկյանը:

«Շատ կարևոր ենք համարում այն հանգամանքը, որ այս թեման կարող է դառնալ հետազոտական նոր ծրագրի սկիզբ, որով հնարավոր կլինի ի մի բերել հայկական տպագրության աշխարհիկ և հոգևոր տարատեսակ թեմաներով մեկէջյա պատկերները»,- նշում է Ստյոպա Պետոյանը:

Ստյոպա Պետոյանը պատմական գիտությունների թեկնածու է, աշխատում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնում: Շողակաթ Դևրիկյանը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի ասպիրանտ է և կրտսեր գիտաշխատող: Նաև աշխատում է Մատենադարանի միջնադարյան արվեստի ուսումնասիրման բաժնում: Շողակաթի թեկնածուական աշխատանքը նվիրված է հենց Սուրբ Գրիգոր Լուսավորչի կերպարի դրսևորումներին հայկական և եվրոպական արվեստում:

Մոնիկա ԵՐԻՑՅԱՆ

ՄՏ-ՔԵՐԻ ՀԱՐԹԱԿ

Ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանի անդրադարձը տարածաշրջանային խնդիրներին

● Նոր աշխարհակարգում Հարավային Կովկասը կմնա Ռուսաստանի ընդհանուր ազդեցության ոլորտում, իհարկե, հաշվի առնելով այն նոր ստատուս-քվոն, որը ստեղծվել է Արցախի կորստից ու հայաթափումից հետո: Ու այդ ստատուս-քվոն թուրքական գործոնի ուժեղացումն է, և ես կարծում եմ՝ ԱՄՆ-ը կհամաձայնի դրան:

● Թուրքիան մեծ խաղ է սկսել Մերձավոր Արևելքում, և Թուրքիան պիտի փորձի ավելի շատ օգուտ քաղել այդ խաղից: Թուրքիան իր ռեսուրսների մեծ մասը կուղղի դեպի Մերձավոր Արևելք: Թուրքիան կպահպանի ստեղծված իրավիճակը և այստեղ՝ Հարավային Կովկասում, շատ ակտիվություն չի ցուցաբերի: Իսկ սա նշանակում է, որ առանց Թուրքիայի Ադրբեջանը չի կարող գնալ կտրուկ գործողությունների: Իհարկե, Թուրքիայի վերջնական նպատակը Հարավային Կովկասը թուրքական ազդեցության գոտի դարձնելն է, բայց դա չի լինի հիմա: Էրդողանը մտադիր է արտահերթ ընտրությունների միջոցով կրկին մնալ իշխանության:

● Աթաթուրքը մեծապես կարևորում էր, որ Թուրքիան ու Ադրբեջանն ունենան անմիջական կապի տարածք: Նրանք հիմա էլ են մտածում, որ թուլացած Հայաստանի պարագայում ճիշտ ժամանակն է ստանալ, այսպես կոչված, Զանգեզուրի միջանցքը: Բայց Թուրքիան հնարավորություն չունի այդ միջանցքից օգտվելու, որովհետև չունի երկաթգիծ: Նոր են սկսել կառուցել, ավարտը կլինի 2029 թ.: 240 կմ-անոց երկաթգիծ պետք է կառուցեն բավական բարդ տեղանքում: Ես տեսնում եմ, որ այդ երկաթգծի կառուցման աշխատանքներն ինտենսիվությամբ չեն ընթանում: Ավելին, այդ երկաթգծի կառուցումն ադրբեջանցիներն են կարծես թե համաձայնել ֆինանսավորել, որովհետև թուրքերն այդ հնարավորությունը չունեին: Ադրբեջանն ունի ավտոմոբիլային ճանապարհի խնդիր, որն ուզում է անպայման ստանալ: Այլ հարց է՝ Ադրբեջանը կգնա՞ միջանցքը զենքի ուժով վերցնելու ճանապարհով, թե՞ ոչ: Ես կարծում եմ՝ առանց Թուրքիայի չի գնա այդ քայլին, իսկ Թուրքիան հիմա այլ խնդիրներով է զբաղված Մերձավոր Արևելքում: Հաջորդը Եվրոպա-Չինաստան կապն է, այսինքն՝ միջազգային շահագրգռվածությունը: Ամերիկացիները շահագրգռված չեն, որ Եվրոպա-Չինաստան առևտրաշրջանառության կապը լինի Ռուսաստանի տարածքով, նրանք ուզում են՝ դա լինի միջին միջանցքով, այսինքն՝ Հարավային Կովկասով: Զանգեզուրի միջանցքն ավելի կարճ է, հետևաբար՝ ավելի հարմարավետ է: Ադրբեջանն ու Թուրքիան ուզում են առանց հսկողության երթևեկելու համար ստանալ Զանգեզուրի միջանցքը, մի բան, որ նման պայմաններում Ադրբեջանն ու Թուրքիան չեն կարող անել Վրաստանի նկատմամբ, այսինքն՝ երթևեկել առանց հսկողության:

● Ես չեմ կարող պնդել, որ Հարավային Կովկասը նոր աշխարհակարգում կպահպանի իր նշանակությունը նույնիսկ այդ միջին միջանցքով, որովհետև ցամաքային ճանապարհները խոցելի կլինեն, և Չինաստանը շահագրգռված չի լինի դրանում: Չեմ կարծում նաև, որ Զանգեզուրի միջանցքը Ռուսաստանի համար ներկա փուլում ունենա կարևոր նշանակություն: Դա ավելի շատ քաղաքական դիվիդենտներ ստանալու համար է:

● Հայաստանի իշխանությունների քաղաքականությունը Զանգեզուրի միջանցքի վերաբերյալ ուղղված է մեր նկատմամբ Թուրքիայի և Ադրբեջանի ճնշումները մեղմելուն: Հայտարարություններն էլ են այդ նպատակով արվում: Հայաստանն ավելի շատ հակված է հայ-թուրքական սահմանի բացմանը: Թուրքիան սահմանը չի բացի, քանի դեռ ադրբեջանցիների բոլոր նախապայմանները կատարված չեն: Ավելին, ես վստահ եմ, որ եթե անգամ այդ Խաղաղության պայմանագիրը ստորագրվի Ադրբեջանի հետ, Թուրքիան լիովին սահմանը չի բացի՝ Հայաստանի վրա ճնշում գործադրելու համար:

● Թուրքիային պետք չէ հայ-թուրքական սահմանի բացումը, որովհետև այդտեղ նա տնտեսական շահ չունի: Հայկական կողմը շահագրգռված է Թուրքիայի հետ ունենալ նորմալ հարաբերություններ: Իհարկե, ավելի լավ է ունենալ Թուրքիայի հետ բաց սահման, բայց մենք պետք է կարողանանք այդ սահմանը կառավարելի դարձնել, որ այն չսպառնա մեր ազգային ու պետական անվտանգությանը: Իսկ այդ վտանգը կա:

● Իմ ընկալմամբ թուրքական վերնախավի գլխում կա Բաթումի պայմանագրի մոդելը, երբ Հայաստանն իր գոյությամբ պետք է պարտական լիներ Թուրքիային: Ներկա աշխարհակարգում դա հնարավոր չի լինի անել: Եվ նրանք մտածում են, որ Հարավային Կովկասում ազդեցություն ունենալով, Ռուսաստանին դուրս մղելով՝ Հայաստանին դնեն իրենց ազդեցության տակ: Այս առումով Հայաստանը պետք է դիմակայի սրան: Դիմակայել կարող է, եթե կարողանան ոչ միայն տարածաշրջանում մեր երկրի դերը բարձրացնել, այլև ունենալ հուսալի դաշնակիցներ:

● Ռուսաստանը մեր ռազմավարական դաշնակիցն է: Ե՛վ Հայաստանի, և՛ Ռուսաստանի կողմից միմյանց հասցեին ասվածը հռետորաբանություն է: Տնտեսական հարաբերությունները շատ լավ զարգանում են թե՛ Ռուսաստանի հետ, թե՛ ԵԱՏՄ շրջանակում: ՀԱՊԿ-ից մեզ ոչ ոք դուրս չի հանի: Ես դժվարանում եմ ասել՝ Հայաստանի իշխանությունն ինչո՞ւ է Ռուսաստանի դեմ նման հայտարարություններ անում: Կարծում եմ՝ Եվրաքվեի նախաձեռնությունը մեր քաղաքակրթական պատկանելության հարցի մասին է, բայց որևէ քայլ չի արվում: Եվրոպայից որևէ պաշտոնական մակարդակով հայտարարություն չի եղել, չկա ոչ մի արձագանք Հայաստանին ԵՄ ընդունելու մասին: Չեմ կարծում, որ այդ գործընթացը կշարունակվի, որովհետև նոր աշխարհակարգում Եվրոպայի դերը թուլանալու է: Կարծում եմ՝ Կրեմլում դա հասկանում են:

● Մենք տեսնում ենք Բաքվում գտնվող գերիների տառապանքները: Ադրբեջանի վրա պետք է դրսից ճնշում լինի, որ Ալիևը դադարեցնի այս խայտառակությունը: Եթե ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ու Եվրամիության կողմից շատ կոշտ հայտարարություն լինի, միայն դա կարող է ազդել Ալիևի վրա, ինչը բարդ խնդիր է, որովհետև նրանք էլ իրենց շահերն ունեն Ադրբեջանի հետ: ԵԱՀԿ Մինսկի խմբի երեք համանախագահող երկրների ղեկավարները պետք է հայտարարությամբ հանդես գան: Հայաստանի պես երկիրը ոչինչ չի կարող անել: Եթե Հայաստանը դուրս գա բանակցություններից, դա միայն ձեռնտու է Ադրբեջանին: Նրա ինչի՞ն է պետք խաղաղության պայմանագիր կնքելը:

● Ես գիտեմ, որ Արամ կաթողիկոսը գերիների հարցով դիմել է Թրամփին, ու նաև գիտեմ, որ այդ նամակը մտել է Սպիտակ տուն: Կդրվի՞ այն Թրամփի սեղանին, թե՞ չէ, դժվար է ասել: Խնդիրը մեր պատանդներին, ռազմագերիներին բերելն է: Սա է հրատապը:

● ՀՀ Սահմանադրության փոփոխության նախադրյալները չեմ հասկանում: Եթե կառավարման ձևը չի փոխվում, Սահմանադրությունն ինչո՞ւ է փոխվում: Անկախության հռչակագրին ձեռք տալ չեն կարող: Չեմ կարծում, որ Հայաստանի որևէ ղեկավար կարող է անտեսել ժողովրդի որոշումը: Իշխանությունները Սահմանադրություն չեն կարող փոխել: Հանրաքվե պիտի լինի, ու որոշի ժողովուրդը: Ինձ համար կարմիր գիծ է Զանգեզուրի միջանցքի վերահսկողության հարցը, Անկախության հռչակագրի տեքստի փոփոխությունը, միջազգային հայցերը միակողմանի հետ կանչելը:

● Բաթումի պայմանագրի կնքման ժամանակ իրադրությունն այլ էր: Հիմա մենք ունենք ռազմավարական դաշնակից՝ ի դեմս Ռուսաստանի: Հայաստանի անվտանգության երաշխավորը 102-րդ ռուսական ռազմաբազան է: Ես համոզված եմ, որ ոչ մի իշխանություն չի կարող շրջանցել աշխարհաքաղաքական և տնտեսական իրողությունները: Հայաստանը չի կարող հրաժարվել Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական դաշինքից, դուրս չի գալու ԵԱՏՄ-ից: Մնացածը հռետորաբանություն է:

Թրամփն ու Պուտինը կորոշեն, հետո կկանչեն ստորագրելու...

● Եթե Թրամփն ու Պուտինն արդեն Արկտիկան են կիսում, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի հարցերը հաստատ քննարկած կլինեն: Որևէ կասկած չունենաք, որ հիմա Իսրայելը, Թուրքիան ու Ադրբեջանը Թրամփին են ներկայացնում Զանգեզուրի միջանցքի վերաբերյալ իրենց առաջարկները: Մեր մեջքի հետևում բանակցություններ են ընթանում: Տեղեկություն կա, որ 1.5 միլիարդ փող են տվել Ադրբեջանին՝ ենթակառուցվածքները զարգացնելու համար: Այդ ենթակառուցվածքները որտե՞ղ են լինելու... Երբ փողոցից մարդ ես բերում, որ երկիրդ ղեկավարի, նման բաներն անխուսափելի են: Այնպես որ, իրենք կորոշեն, հետո Նիկոլ Փաշինյանին կկանչեն ստորագրելու:

● Ուկրաինացիները մեզ պես չեն: Նրանց տարիներով չեն ասել՝ Դոնբասը, Լուգանսկը հանձնենք, լավ կապրենք... Զելենսկին առանց արդյունքի չի կարող Ուկրաինա վերադառնալ: Նա իր ժողովրդին առաջարկ պիտի ներկայացնի: Պատերազմը կշարունակվի, և կրկին մարդիկ կզոհվեն:

● Եվրոպան չի կարող ապահովել Ուկրաինայի անվտանգությունը: Նա անգամ իր անվտանգությունն ապահովել չի կարողանում:

● Մակրոնը խաբեց մեզ, հիմա էլ խաբում է Ուկրաինային՝ դրդելով նրանց շարունակել պատերազմը: Եվրոպան չի կարող Ուկրաինային երկարաժամկետ աջակցություն ցուցաբերել: Մարդիկ հոգնել են պատերազմից: Եվրոպայում գներն աճել են մոտ 29 %-ով: Եվրոպան չի կարողանալու ռուս-ուկրաինական հակամարտության մեջ փոխարինել ԱՄՆ-ին:

● Եթե Թուրքիան Հայաստանում դեսպան ունենար, նա ավելի լավ չէր կարող ներկայացնել Թուրքիայի շահերը, քան դա անում է Փաշինյանը:

● Հայաստանում հասարակության ներսում Սահմանադրության փոփոխության պահանջ չկա: Փաշինյանի տեխնիկան միշտ նույնն է՝ սկզբում ինչ-որ հարցի մասին թեթևակի խոսել, հետո խաբել, փորձել համոզել: Եթե մենք Ադրբեջանի պահանջով Սահմանադրություն փոխենք, նույն վայրկյանից կդադարենք լինել որպես ինքնիշխան պետություն:

● Ալիևի և Էրդողանի նպատակն է՝ ոչնչացնել Հայաստանը: Միշտ այդպես են արել. սկզբում՝ համոզել, հետո՝ կոտորել, մինչև Ալեքսանդրապոլի պայմանագիր... Քայլ առ քայլ, սուտ-կեղծ խաղաղության լոզունգներով ոչնչացրին ողջ Հայաստանը... Հայաստանի վերաբերյալ պատմության ընթացքում 8 պայմանագիր է կնքվել, որոնք բոլորն էլ խախտվել են...

● Ի՞նչ է ասում Փաշինյանը. Արցախը հանձնենք, խաղաղ ապրենք, հետո ասում է՝ Սոթքը, Տավուշի գյուղերը հանձնենք, խաղաղ ապրենք, հետո Կիրանցը հանձնենք, անվտանգ ապրենք... Հետո ասում է՝ 300 000 ադրբեջանցի գա, որ խաղաղ ապրենք... Ծիծեռնակաբերդը, Մատենադարանը փակենք, որ խաղաղ ապրենք... Այսպես Արցախն ու Հայաստանը հանձնում է: Սա հիպնոս է: Սրա արդյունքում կստեղծվի սուպեր Թուրքիա՝ Բաքվից մինչև Ստամբուլ:

● 2014 թ. Ուկրաինային ստիպեցին ստորագրել պայմանագիր ԵՄ անդամակցության մասին. հենց այսպես սկսվեց ուկրաինացի ժողովրդի ողբերգությունը: Այդ նույն հեքիաթները հիմա մեզ են պատմում: Ուկրաինան չի ընդգրկվելու ո՛չ Եվրամիության, ո՛չ ՆԱՏՕ-ի կազմում: Եվրոպան ոչ միայն չի պատրաստվում Հայաստանին ու Ուկրաինային ընդգրկել ԵՄ կազմում, այլև չգիտի՝ վաղն իր հետ ինչ է լինելու: Որևէ եվրոպացի պաշտոնյա որևէ հայտարարություն չի արել, որ մեզ սպասում են ԵՄ-ում: Նման բան միայն մեր «բեսեդկագետներն» են ասում:

● Հայաստանում Ֆրանսիայի դեսպանը, որ Արցախը Ալմա Աթայով Ադրբեջան է համարում, թող պատասխանի՝ Ֆրանսիան պատրա՞ստ է Հայաստանին անվտանգության երաշխիքներ տալու: Ֆրանսիան խոսք էր տվել, որ Արցախում էթնիկ զտում չի լինելու: Եվ ի՞նչ արեցին: Ոչի՛նչ: Եվրոպառլամենտի ֆրանսիացի պատգամավորն ասաց՝ իրենք Հայաստանը վաճառեցին նավթի ու գազի դիմաց: Հերիք է Մակրոնը կեղծ սպասումներ առաջացնի՝ հայալեզու գեղեցիկ գրառումներ անելով թվիթերներում:

● Ես ու իմ ընտանիքը լավ հիշում ենք 90-ականները, չենք ուզում ցուրտ ձմեռների ժամանակ մի ձեռքով ու սառը ջրով լողանալ: ԵՄ մտնելու այս գործընթացը դա է նշանակելու: Ես չեմ ուզում, որ Ադրբեջանը որոշի՝ ինձ երբ գազ տա: Ոչ ոք չի ասում՝ չպետք է մերձենալ Եվրոպայի հետ, բայց կան ռազմաստրատեգիական տարբերություններ:

● Հայաստանում թե՛ արտահերթ, թե՛

հերթական պրոցեսների դեպքում չարաշահումներ լինելու են: Գործի են դրվելու ուժային կառույցները՝ ոստիկանություն և այլն, վարչական ռեսուրսը, աղանդավորական կազմակերպությունները:

● Ինչո՞ւ է Փաշինյանը գումար ծախսում պարեկների, ոստիկանների, ոչ թե բանակի վրա. դրանով ինքը ցույց է տալիս՝ իր համար վտանգը որտեղից է սպասում: Փաշինյանի համար սպառնալիքը ժողովուրդն է, ոչ թե Ադրբեջանը և Թուրքիան:

● Հայաստանում բախվում են Արևելքն ու Արևմուտքը: Դա կարող էր շահավետ լինել, եթե մենք խելք ունենայինք: Պետք չէր նոր Զելենսկի դառնալ, հիստերիկություն անել: Հիմա մեզ են նստեցնելու, ասեն՝ դե ստորագրի՛ր...

Արթուր ԽԱՉԻԿՅԱՆ
ԱՄՆ Սթենֆորդի համալսարանի քաղաքագիտության դոկտոր

(168.am, 7 մարտի, 2025)



«Գիտության աշխարհում» հանդեսի 20-ամյակի առթիվ

«Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսի հրատարակման 20-ամյակի շրջանակներում զրուցել ենք Հանդեսի գլխավոր խմբագիր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Կիրակոսյանի հետ:

- Հարգելի՛ պարոն Կիրակոսյան, Ձեր կարծիքով ի՞նչ դեր և նշանակություն ունի «Գիտության աշխարհում» հանդեսը, ո՞րն է նրա հիմնական առաքելությունը:

- Դժվար է գերագնահատել գիտահանրամատչելի գրականության դերը՝ նկատի ունենալով գիտության բոլոր բնագավառների բուռն զարգացումը, նոր և միշտ զարմացնող գիտական հայտնագործություններն ու դրանց հույժ կարևոր և երբեմն անսպասելի կիրառությունները՝ միտված հասարակության ամենատարբեր պահանջմունքների բավարարմանը:

Գիտահանրամատչելի գրականությունը կոչված է հասարակությանը մատչելի ներկայացնելու ժամանակակից գիտության և տեխնիկայի նշանակալի ձեռքբերումները, նշելու դրանց օգտագործման հեռանկարները և կարևոր գործառույթները մարդկային հասարակության առաջընթացի գործում:

«Գիտության աշխարհում» հանդեսն իր փոքր, բայց կարևոր բաժինն ունի Հայաստանի Հանրապետությունում վերը նշված գործառույթների իրականացման շնորհակալ գործում:

Հանդեսի խմբագրակազմը մեծ նշանակություն է տալիս Հայաստանում կատարվող գիտական հետազոտությունների հանրայնացմանը և ինչպես վաստակաշատ, այնպես էլ երիտասարդ գիտական կադրերի ընդգրկմանն այս կարևոր ու պատասխանատու գործում: Ասվածի վկայությունն է նաև այն իրողությունը, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարության Գիտության կոմիտեի տրամադրած դրամաշնորհների թեմաների կատարողներն ամսագրի էջերում մատչելի ներկայացնում են իրենց հետազոտությունների հիմնական արդյունքները:

«Գիտության աշխարհում» հանդեսի շուրջ մեկ երրորդը տրամադրվում է հայրենագիտության բնագավառում կատարվող հետազոտություններին, հայոց պատմության կարևոր դեպքերի, հայ մշակույթի անթիվ գանձերի, մշակույթի երախտավորների, հանիրավի մոռացված անհատների հավուր պատշաճի ներկայացմանը, որը, անշուշտ, խիստ կարևոր է հատկապես ժամանակակից համընդհանրացման պայմաններում ազգային ինքնության պահպանման տեսանկյունից:

- Արդյո՞ք Հանդեսը ծառայում է իր նպատակին:

- Կարծում եմ, որ Հանդեսը ծառայում է իր հիմնական նպատակին, այն է՝ գիտելիքի հանրայնացմանը և հասարակության շրջանում գիտական մատչելի տեղեկույթի տարածմանը: Սակայն մեր գործունեության արդյունքներն ավելի զգալի ու օգտակար կլինեին, եթե Հանդեսը հրատարակվեր ավելի մեծ տպաքանակով (նշենք, որ տպագրական ծախսերի թանկացման հետևանքով 2022 թվականից Հանդեսի տպաքանակը 500-ից դարձել է 300 օրինակ) ու տրամադրվեր հանրապետության, ինչպես նաև Սփյուռքի դպրոցներին և ուսումնական հաստատություններին:

- Գիտության և տեխնոլոգիաների զարգացման ներկա փուլում որքանո՞վ է կարևորվում Հանդեսի հրատարակումը:

- Հանդեսի հրատարակումն անհրաժեշտ է գիտության և տեխնոլոգիաների զարգացման հատկապես արդի փուլում: Գրեթե ամենօրյա հաճախականությամբ տեղեկատվական ցանցերը լցվում են գիտական հայտնագործությունների մասին հսկայածավալ տեղեկատվությամբ, որի մեջ անգամ մասնագետներին հաճախ դժվար է կողմնորոշվել: Հանդեսը, նկատի ունենալով նաև աշխարհում հայտնի գիտահանրամատչելի ամսագրերի հարուստ փորձը և մոտեցումները, ձգտում է իր ընթերցողին ներկայացնել թարմ, հրատապ և ժամանակակից տեղեկատվություն՝ միաժամանակ փորձելով առնչություններ գտնել Հայաստանում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների հետ՝ շեշտելով հայ գիտնականների ուսումնասիրությունների արդիականությունը:

- Ի՞նչ կմաղթեք Հանդեսի ընթերցողներին:

- «Գիտության աշխարհում» հանդեսի ընթերցողներին մաղթում եմ քաջառողջություն, հաջողություններ ուսման մեջ ու աշխատանքում, ինչպես նաև սերտ կապ Հանդեսի հետ:

Հարցազրույցը վարեց
Նարինե ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

«Արվեստի փիլիսոփայության պատմություն»

Վերջերս ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի և Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի գիտական խորհուրդների երաշխավորությամբ լույս է տեսել «Արվեստի փիլիսոփայության պատմություն» ուսումնամեթոդական ծավալուն ձեռնարկը, որի հեղինակն է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Սվետլանա Արզումանյանը:

Դասագիրքն առաջին փորձն է հայերեն ներկայացնելու արվեստում ձևավորվող երևույթների փիլիսոփայական բազմաբովանդակ ըմբռնումները: Ձեռնարկն իրավացիորեն կարող է համարվել հիմնարար ուսումնասիրություն, որտեղ ամփոփվել է հեղինակի գիտահետազոտական և դասախոսական շուրջ 40-ամյա գործունեության արդյունքն այնպիսի կարևոր ոլորտում, որպիսին արվեստի փիլիսոփայությունն է:

Սվետլանա Արզումանյանը փիլիսոփայության և գեղագիտության տիրույթում հայտնի է իր բազմածավալ մասնագիտական աշխատություններով Հայաստանում և արտերկրում: Ներկայացվող աշխատանքը ոչ միայն ըստ ամենայնի համապատասխանում է իր բնագավառին, այլև այդ բնագավառի ազգային ուսումնասիրությունների գիտամեթոդական համակարգման առաջին և անհրաժեշտ ձեռնարկն է: Նկատի ունենք արվեստի փիլիսոփայության պատմության և տեսության խնդիրների համակարգված մեթոդաբանական հայեցակետերը, որոնք առաջին անգամ հայերեն ամբողջական ներկայացվել են իբրև ուսումնական ձեռնարկ: Ընդ որում դժվարին հանգուցային տարբեր ուղղությունները ներկայացվում են մատչելի շարադրանքով՝ միաժամանակ դառնալով յուրօրինակ անդրադարձ այն տեղաշարժերի, որ ունեցել է փիլիսոփայական միտքը ժամանակների հոլովույթում: Կարևորում ենք նաև յուրաքանչյուր գլխին կից ներկայացվող գրականության ընտրությունը:

Հեղինակն անդրադարձել է արվեստին վերաբերող այն հարցերին, որոնք քննարկման առարկա են դարձել տարբեր ժամանակների փիլիսոփաների ուսմունքներում՝ ամեն մի հարց դիտարկելով բազմաթիվ մեկնաբանությունների ներքո: Քննարկվող հարցերի շարքում են արվեստի առաջացման, յուրահատուկ էության, իրականության հետ հարաբերության, նպատակների որոշման, հասարակության ու առանձին մարդու կյանքում արվեստի բազում գործառույթների, «արվեստագետ-ստեղծագործություն-ընկալող» կայուն համակարգին վերաբերող խնդիրները և այլն:

Ձեռնարկում պահպանված է դարաշրջանների պատմական ընթացքի տրամաբանությունը: Ներկայացվել են արվեստի փիլիսոփայության զարգացման հիմնական փուլերը, դիտարկվել է այն ուղին, որով ընթացել է արվեստը վերլուծող փիլիսոփայական միտքը՝ սկսած անտիկ փիլիսոփաների տեսություններից, անցնելով միջնադարի և Վերածննդի փուլերով մինչև նոր ու նորագույն ժամանակներ՝ իրենց ռացիոնալիստական և իռացիոնալիստական ուսմունքներով, մինչև մեր օրերը՝ 21-րդ դարի առաջին քառորդը:

Աշխատության կարևոր արժանիքներից է այն, որ արևմտյան արվեստի փիլիսոփայական իմաստավորման հետ մեկտեղ հեղինակն անդրադարձել է նաև հայկական արվեստի և հայ փիլիսոփայական մտքի մասնակցությանը համաշխարհային գեղարվեստական մշակույթի ձևավորման և դրա ըմբռնման գործընթացին: Փորձ է արվել օբյեկտիվորեն ներկայացնելու հայ փիլիսոփաների ու արվեստագետների տեսությունները, արդեն միջնադարից սկսած, ըստ արժանվույն գնահատելու նրանց ձեռքբերումները, արժևորելու նրանց դերը մարդկության հոգևոր ժառանգության մեջ, ինչը, բնականաբար, չենք գտնի այլ լեզուներով գրված արվեստի փիլիսոփայության դասագրքերում:

Ընդգրկելով մեծ ծավալի նյութ՝ հեղինակը հաջողությամբ լուծել է իր առջև դրված խնդիրը: Հարցերը դիտարկելով սոցիալ-մշակութային համատեքստում և հիմնվելով պատմական մեթոդի կիրառման վրա՝ նա ցույց է տվել փիլիսոփայության և արվեստի սերտ կապը, անդրադարձել գրեթե բոլոր փիլիսոփայական այն ուղղություններին, որոնց ներկայացուցիչները կարևորել են արվեստի խնդիրները և իմաստավորել դրանք: Այդ գործընթացում Ս. Արզումանյանը հիմնվել է սկզբնաղբյուրների վրա, դիմել նաև դրանց վերաբերող գիտական գրականության վերլուծությանը:

Ս. Արզումանյանի «Արվեստի փիլիսոփայության պատմություն» ուսումնամեթոդական ձեռնարկը, որը կարևոր ներդրում է փիլիսոփայական դասընթացների առարկայացանկում, օգտակար կլինի արվեստի բոլոր տեսակների ոլորտում մասնագիտացված կրթություն ստացող ուսանողների, ինչպես նաև արվեստի խնդիրների փիլիսոփայական իմաստավորմամբ հետաքրքրվող անձանց համար:

Լաուրա ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԲԱՌԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ասպիրանտ

Բառիս նշանակությունն է՝ «ասպիրանտուրայում սովորող անձ, որ հետբուհական կրթություն է ստանում՝ գիտական թեզ պաշտպանելու նպատակով»:

Ասպիրանտ բառն այդ իմաստով գործածական է մի շարք լեզուներում, ինչպես գերմ. **Aspirant,** բայի **aspirans (aspirantis**) ձևից, որ անկախացել է գոյականի արժեքով:

Aspirare բայի իմաստներից մեկն է՝ «ձգտել ինչ-որ բանի, երազել՝ տենչալ ինչ-որ բան, մերձենալ՝ մոտենալ ինչ-որ բանի»: Այդ իմաստները պահպանել են հետևյալ լեզուները. հմմտ. գերմ. **aspirieren** (ձգտել, սպասել), անգլ. **aspire** (ձգտել), ֆրանս. **aspirer** (տենչալ, ձգտել) և այլն:

Ահա հենց նախնական (բայական) այդ իմաստն է ընկած ասպիրանտ բառի ձևավորման հիմքում՝ ձգտումը գիտության մեջ խորանալու՝ գիտական թեզի պաշտպանության՝ գիտական աստիճանի:

Հետևաբար՝ ասպիրանտը «գիտության մեջ խորանալու ձգտում ունեցողն է, գիտական թեզի պաշտպանությանը մոտեցողը, գիտական աստիճան ակնկալողը»:

Այդ իմաստով էլ այն գործածվում է վերոնշյալ լեզուներում:

Aspirant բառով լեզուներում կան մի շարք կազմություններ: Հմմտ. գերմ. aspirantur (հայ. ասպիրանտուրա), ռուս. **аспирантура, аспирантка, аспирантский** (հայ. ասպիրանտական), հմմտ. նաև՝ ասպիրանտորեն, ասպիրանտություն, ասպիրանտուրական, ասպիրանտուրային և այլն:

Ինչպես երևում է համեմատական բառակազմությունից, հայերենում ասպիրանտ բառով ավելի շատ նորակազմություններ են առաջացել: Եթե մենք չգիտենք ասպիրանտ բառի ծագումնաբանությունը, ուստի ասպիրանտն ընկալվում է իբրև «կարգավիճակով ուսանողից բարձր», մինչդեռ ստուգաբանությունն օգնում է իմանալու, որ ասպիրանտը, չբավարարվելով բուհական կրթության մակարդակով, ձգտում է, տենչում, երազում ինչ-որ բարձունք նվաճելու:

Եվ դա գիտության բարձունքն է:

Ըստ Լ. Խաչատրյանի «Բառաշխարհի գաղտնիքները» գրքի

Հայ մամուլի հիմնադիր հայրը

Հայ առաջին պարբերականի լույսընծայման 230 և նրա հիմնադիր Հարություն Շմավոնյանի ծննդյան 275–ամյակների առթիվ

1794 թ. հոկտեմբերի 16-ին Արևելքի մեծ, հին ու հետաքրքիր երկրներից մեկի՝ Հնդկաստանի Մադրաս քաղաքում առաջին ճիչն է արձակում հայ մամուլի բազմահարուստ ու բազմարժեք ընտանիքի առաջնածին զավակը. լույս աշխարհ բերողը մի հայ քահանա էր՝ Հարություն Շմավոնյան (Շիրազեցի) անուն–ազգանունով:

Ծնվել է 1750 թ. փետրվարի 9 (21)-ին Իրանի Շիրազ քաղաքում, քահանա է ձեռնադրվել ծննդավայրի Սուրբ Ամենափրկիչ վանքում, պաշտոնավարել մինչև 1777 թ.: Այդ թվականը չարաբաստիկ էր նրա համար. համաճարակը խլում է երկու դեռատի զավակներին. մեծ վիշտ է իջնում հայորդու հոգուն, և նա իրեն նվիրում է ճգնակեցության, որ տևում է 7 տարի: Ճգնական տարիներին ուսումնասիրում է պարսկերեն և արաբերեն, պարսկական ու արաբական գրականություն, փիլիսոփայություն և աստվածաբանություն: Ճգնության շրջանում գրում է մի գիրք, որ մնում է ճգնավայրի ձեռագրատանը: 1784-ին Շմավոնյանը՝ որպես ավագ քահանա, ուղարկվում է Մադրաս: Ապրելով ու գործելով այդ քաղաքում՝ նա սիրում է մադրասահայ համայնքը ու սիրվում նրա կողմից, որոշում է ընդմիշտ հաստատվել Մադրասում: 40 երկար ու ձիգ տարիներ նա իր մղումներով ու գործերով պիտի կապված մնար այս հայահոծ ու հայակյանք քաղաքին:

1789-ին հիմնադրում է Մադրասի երկրորդ հայկական տպարանը, պատրաստում տառեր, դրանք անվանակոչում «որդի վշտաց»՝ ի հիշատակ իր երկու վաղավախճան որդիների: Մադրասում ծավալում է եռուն հրատարակչական գործունեություն. առաջին գիրքը լույս է ընծայում 1789-ին՝ «Պատմութիւն սրբոյ կուսին Մարիանէ»: Շմավոնյանին օգնելու համար Կալկաթայից Մադրաս է գալիս Սամուել քահանա Ղայթմազյանցը, որի խորհրդով Շմավոնյանը տեղի հայկական դպրոցների համար տպագրում է անհրաժեշտ գրքեր: Հետագայում գրասեր հայորդու ձեռամբ հրապարակ են իջնում «Պատմութիւն կայսերն Փոնցիանոսի» (1790 թ.), «Տաղարան Սիմէոն կաթողիկոսի» (1791 թ.), Թադեոս Սոգինյանցի «Տետրակ որ կոչի Ողբ Հայաստանեայց» (1791 թ.), Պաղտասար Դպիրի «Քերականութիւն» (1791 թ.), Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» (1792 թ.), «Ղեկաւար մանկանց» (1797 թ.) և այլ գործեր:

1794 թ. հոկտեմբերի 16-ին Մադրասում Հարություն քահանա Շմավոնյանն իրականություն է դարձնում իրեն անմահություն բերած իր հղացումը. հրատարակում է առաջին հայ պարբերականը՝ «Ազդարար» ամսագիրը: Հայության անդրանիկ ամսագրում տեղ են գտնում գրական և պատմագիտական նյութեր՝ ինքնուրույն ու թարգմանական, Ռուսաստանի հայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ Արղությանի «Օրհնութեան թուղթը», ուղերձներն ու նամակները, զետեղվում են նաև զրույցներ, դաստիարակչական հոդվածներ, տեղեկատվական նյութեր. Հարություն քահանան նպատակ էր դրել բարձրացնելու, բարձր պահելու իր ժողովրդի մտավոր-գիտակցական մակարդակը: Ամսագիրը նաև օգտագործվել է հայ հեղինակների աշխատությունները կորստից փրկելու համար, ինչպես Խաչատուր Ջուղայեցու «Պատմութիւն պարսից»-ը:

«Ազդարար»-ը շահեկանորեն տարբերվում էր առաջին եվրոպական պարբերականներից. եթե վերջիններս հիմնականում առևտրական տեղեկատուներ էին, ապա հայ մամուլի առաջնեկը գիտաճանաչողական, պատմագիտական, գրական, հասարակական հանդես էր, որ արտացոլում էր հնդկահայոց կյանքը, անդրադարձ անում հայ ժողովրդի լուսավորությանը, ազգային ինքնագիտակցությանն ու ազատագրությանը:

Ամսագիրը թեև խանդավառ ընդունելության է արժանանում, այնուհանդերձ երկար կյանք չի ունենում, քանզի բաժանորդագրությամբ հնարավոր չի լինում ապահովել խմբագրի կողմից կատարված ծախսերը: Ընդամենը 18 համարի թողարկումից հետո՝ 1796 թ. մարտին, բոլորանվեր այրը դադարեցնում է «Ազդարար»-ի հրատարակությունը: Չի ընդհատվում, սակայն, ռահվիրա մշակի լուսավորական, գրքաստեղծ գործունեությունը: 1797 թ. վերջապես լույս է ընծայում Դավիթ Անհաղթի «Գիրք սահմանաց»-ը, որի աշխատանքներն սկսվել էին 1794 թ.: 1809-ից, տպարանը հանձնելով աշակերտներին, Շմավոնյանն իրեն ամբողջովին նվիրում է մադրասահայ հասարակական-լուսավորական եռուզեռին: Քաղաքում գործող հայրենասիրական խմբակի ակնառու անդամներից էր նա, սերտ կապեր ուներ Ռուսաստանի և Հայաստանի առաջադիմական շրջանների հետ, կազմակերպիչն էր մի շարք հանգանակությունների, որ կոչված էին նպաստ բերելու կրթամշակութային իրագործումներին:

Տպագրիչ, հասարակական գործիչ, հայ առաջին պարբերականի հիմնադիր Հարություն Շմավոնյանը երկրային կյանքին հրաժեշտ է տալիս 1824 թ. հունվարի 28-ին Մադրասում: Նրա տապանաքար-հուշարձանը դրված է Մադրասի հայկական եկեղեցու բակում:

Նվիրական մղումներով նա ապրեց իր կյանքը, այդ նվիրական մղումների մարմնացումը եղան հրատարակված գրքերը, սակայն ազգի համար նա փառահեղ ներկայություն դարձավ իր մեծ ու կարևոր հիմնադիր գործով՝ հայ առաջին պարբերականի ստեղծմամբ, որ թեպետ կարճ կյանք ունեցավ, այնուհանդերձ որակով եղավ բարձր և սկզբնավորողը դարձավ նոր բնագավառի հայ կյանքի մեջ. «Ազդարար»-ը ազդարարեց հայ մամուլի ծնունդը:

ՀՀ կառավարության՝ 2004 թ. ապրիլի 22-ի որոշմամբ հոկտեմբերի 16-ը դարձել է «Մամուլի աշխատակիցների օր». հետագայում վերանվանվել է «Հայկական մամուլի օր»: 2005 թ. Մադրասում, իսկ 2006 թ. Երևանում՝ Մամուլի տան դիմաց, կանգնեցվել են Հարություն Շմավոնյանի կիսանդրիները՝ երկուսն էլ քանդակագործ Լևոն Թոքմաջյանի աշխատանքները:

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ (ԱՐՄԵՆՅԱՆ)
Բանասիրական գիտ. թեկնածու

Անտոն Չեխով. Գեղեցկուհիները

Ռուս ականավոր գրող Անտոն Չեխովի «Գեղեցկուհիները» հանրահայտ պատմվածքը ծնվել է տարբեր ժամանակներում գրողին հանդիպած երկու գեղանի՝ հայ և ռուս աղջիկների թողած անջնջելի տպավորություններից: Առաջին գլուխը նվիրված է գիմնազիայում սովորելու տարիներին պատանի Չեխովի այցելությանը Ռոստովի նահանգի հայկական Մեծ Սալա գյուղ: Այստեղ նրա վրա ցնցող տպավորություն է թողնում արտակարգ գեղեցկությամբ օժտված հայ աղջնակը՝ Մաշան (Մարիամ Կունդուպյան): Հայ պարմանուհու գեղեցիկ դիմապատկերը երկար տարիներ մնում է Չեխովի հիշողություններում, և 1888թ. նա հրատարակում է «Գեղեցկուհիները» պատմվածքը, որը հետագայում ունենում է բազմաթիվ հրատարակություններ:

Հիշում եմ, դեռ հինգերորդ թե վեցերորդ դասարանի գիմնազիստ էի, պապիս հետ Դոնի նահանգի Բոլշայա Կրեպկայա գյուղից գնում էի Ռոստով: Օգոստոսյան տոթ, հոգնեցուցիչ, տաղտկալի օր էր:

Ձիուն կեր տալու համար կանգ առանք հայկական Մեծ Սալա գյուղում՝ պապիս ծանոթ մի հարուստ հայի տանը: Պապս ու հայը կիսաձայն խոսում էին…

Հայն առանց շտապելու ելավ ու կանչեց.

-Մաշա՛, արի թեյ լցրու: Ո՞ւր ես, Մաշա՛ :

Շտապ քայլերի ձայն լսվեց, և սենյակ մտավ տասնվեց տարեկան մի աղջիկ՝ չթե հասարակ հագուստով և սպիտակ գլխաշորով: Երբ նա բաժակներն էր լվանում ու թեյ լցնում, թիկունքով կանգնած էր դեպի ինձ, և ես միայն նկատեցի, որ նրա մեջքը բարակ էր, ոտքերը՝ բոբիկ:

Տանտերն ինձ հրավիրեց թեյ խմելու: Սեղանի մոտ նստելով՝ նայեցի ինձ թեյ տվող աղջկա դեմքին և հանկարծ այնպիսի զգացում ունեցա, կարծես ներսս քամի բարձրացավ, սրտիցս ցրեց օրվա տպավորություններն իրենց տաղտկության ու փոշու հետ միասին: Ես նկատեցի դյութող դիմագծերով այն խիստ հրաշալի դեմքերից մեկը, որ երբևէ տեսել էի արթմնի կամ երազում:

Միայն ես չէի, որ կարծում էի, թե հայի աղջիկը գեղեցիկ է: Պապս՝ ութսուն տարեկան այդ ծերունին, չոր բնավորության տեր մի մարդ, անտարբեր դեպի կանայք ու բնության գեղեցկությունները, ամբողջ մի որպե քնքշանքով նայեց Մաշային ու հարցրեց.

-Սա ձեր աղջի՞կն է, Ավե՛տ Նազարիչ:

-Աղջիկս է,- պատասխանեց տանտերը:

-Լավ օրիորդ է,- գովեց պապս:

Հայի աղջկա գեղեցկությունը նկարիչը կանվաներ դասական և կատարյալ: Այդ հատկապես այն գեղեցկությունն էր, որ զննելիս, աստված գիտի, թե ինչպես, ներշնչվում ենք այն հավատով, թե դուք տեսնում եք կանոնավոր դիմագծեր, որ նրա մազերը, աչքերը, քիթը, բերանը, վիզը, լանջը և երիտասարդ մարմնի բոլոր շարժումները, ծուլված իրար, կազմել են մի ամբողջություն, ներդաշնակ մի ակորդ, որի համար բնությունը ամենափոքր չափով անգամ չի սխալվել: Ձեզ թվում է, թե իդեալական գեղեցիկ կինը, չգիտես ինչու, պետք է ունենա հատկապես այնպիսի քիթ, ինչպիսին Մաշայինն է, ուղիղ և փոքր-ինչ կեռ, նույնպիսի խոշոր մուգ աչքեր, նույնպիսի երկար թերթերունքներ, նույնպիսի նվաղկոտ հայացք, և որ նրա սև գանգուր մազերը և հոնքերը նույնպես սազում են քնքուշ, սպիտակափայլ ճակատին ու այտերին, ինչպես դալար եղեգը՝ խաղաղ գետակին: Որպեսզի կարողանաս քանդակել, թվում է՝ պետք է ունենաս ստեղծագործական մեծ տաղանդ: Նայում եք, և քիչ-քիչ ձեր մեջ ցանկություն է առաջանում Մաշային ինչ-որ արտասովոր, հաճելի, անկեղծ և գեղեցիկ բան ասելու, այնպես գեղեցիկ, ինչպես նա ինքն է:

Համաշխարհային առածանի

Չինական

Նախատի՛ր քեզ և ոչ թե արեգակին, եթե քո այգին չի ծաղկել:

Հնարավոր է համեստ լինել առանց իմաստության, սակայն հնարավոր չէ իմաստուն լինել առանց համեստության:

Ամենաբարձր աշտարակն անգամ սկսվում է գետնից:

Ձիմացողը ուղտին սապատավոր ձիու տեղ կընդունի:

Քնել նույն բարձին, չի նշանակում նույն երազը տեսնել:

Ինդոնեզական

Մի նավը երկու նավապետ չի ունենա:

Փիղը հզոր է, բայց էլի ծնկի է իջնում:

Ճապոնական

Հաղթում է նա, ով ճանաչում է ոչ միայն իր հակառակորդին, այլև ինքն իրեն:

Հավատ որ լինի, աստվածներ կճարվեն:

Պարտականությունը փետուրի պես թեթև է լինում, լեռան չափ՝ ծանր:

Մոնղոլական

Ինչքան շուտ արթնանաս, այնքան շատ բան կտեսնես: Ինչքան ուշ քնես, այնքան շատ բան կլսես:

Ձրհորի գորտը ծովի մասին գաղափար չի ունենա:

Վրացական

Գայլը թողածի համար է ափսոսում, հովիվը՝ տարածի:

Եթե կացինը մեղք է գործել, կոթն էլ է մեղավոր:

Ալբերտ Գարեգինի ՂՈՒԼՅԱՆ



Ս.թ. մարտի 12-ին 86 տարեկան հասակում կյանքից հեռացել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Գարեգինի Ղուլյանը:

Ալբերտ Ղուլյանը ծնվել է 1938 թ. մայիսի 2-ին Արցախի Շահումյանի շրջանի Ղարաչինար գյուղում, ուսուցիչների ընտանիքում: 1960 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Աշխատանքային գործունեությունը սկսել է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի Բյուրականի աստղադիտարանի ռադիոաստղագիտության բաժնից՝ որպես լաբորանտ: Նույն թվականին տեղափոխվել է ՀՍՍՀ ԳԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ: 1978 թ.-ից մինչև կյանքի ավարտը Ալբերտ Ղուլյանը ղեկավարել է ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի կիրառական ռադիոֆիզիկայի լաբորատորիան:

Ալբերտ Ղուլյանի գիտական հետազոտությունները կապված են անտենաների բնութագրերի ուսումնասիրության ճշգրիտ մեթոդների մշակման հետ՝ հիմնված հաճախությունների լայն տիրույթում տիեզերական աղբյուրների աղմկային ռադիոճառագայթման ընդունման սահմանային զգայնությամբ ընդունիչ սարքերի և համակարգերի նախագծման և իրականացման վրա:

Նրա ղեկավարած լաբորատորիայում մշակվել են նոր մեթոդներ, որոնք ապահովում են անտենաների բնութագրերի չափման մեծ ճշգրտություններ, ստեղծվել են բարձր զգայնությամբ ընդունիչ համակարգեր, հրապարակվել է ավելի քան 250 գիտական աշխատանք, և ստացվել 30 գյուտի վկայագիր: Լաբորատորիայում ստեղծված նոր, ռադիոաստղագիտական մեթոդների և զգայուն ընդունիչ սարքերի միջոցով մեծ ճշգրտությամբ չափվել են նախկին Խորհրդային Միության տիեզերական կապի նպատակով ստեղծված անտենաների բնութագրերը:

Ակադեմիկոս Ղուլյանը զգալի ավանդ է ունեցել երիտասարդ կադրերի պատրաստման գործում: 1975 թ.-ից նա դասախոսել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի «Ռադիոսարքավորումներ» ամբիոնում:

Ալբերտ Ղուլյանն արժանացել է ՀՍՍՀ Պետական մրցանակի գիտության և տեխնիկայի ոլորտում: 2000 թ.-ին նա ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2010 թ.-ին պարգևատրվել է Անանիա Շիրակացու մեդալով, իսկ 2014 թ.-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: Հանրապետության սահմանների պահպանության տեխնիկական վերազինմանը միտված Ղուլյանի ղեկավարած գիտական խմբի կատարած աշխատանքների շարքն արժանացել է ՀՀ Նախագահի 2011 թ. մրցանակին:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը, ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքը ցավակցում են Ալբերտ Ղուլյանի ընտանիքին, մերձավորներին և ընկերներին: Մեծ գիտնականի, շիտակ, ազնիվ ու համեստ մարդու հիշատակը միշտ վառ կմնա իր գործընկերների և ուսանողների սրտերում:

ՀՀ ԳԱԱ նախագահություն
ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունք

ՄԵԾԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

Էսքիլես



Համաշխարհային գրականության պատմության մեջ էսքիլեսն իր ուրույն և պատվավոր տեղն է զբաղեցնում: Նա Հին Հունաստանի մեծագույն գրողներից էր և գրական նոր ժանրի՝ ողբերգության սկզբնավորողներից մեկը:

Ծնվել է մ.թ.ա. 525 թ. Աթենքին մերձակա Էլևսիս բնակավայրում: Նրա հայրը ազնվական հարուստ տոհմի շառավիղ էր: Մանկության տարիներին Էսքիլեսն ականատես է եղել Աթենքի ներքին բուռն պայքարին. տապալվում էր արիստոկրատիայի իշխանությունը, և հաստատվում էր աթենական դեմոկրատիան: Էսքիլեսը թեև կողմնակից է եղել դեմոկրատիային, այնուհանդերձ դեմ է եղել արմատական դեմոկրատական փոփոխություններին: Էսքիլեսի կյանքը զուգադիպել է հույն-պարսկական պատերազմի ժամանակաշրջանին, մասնակցել է Մարաթոնի ճակատամարտին (մ.թ.ա. 490 թ.), որի ընթացքում ծանր վիրավորվել է: Մասնակցել է նաև Սալամիսի (մ.թ.ա. 480 թ.) և Պլատեայի (մ.թ.ա. 479 թ.) ճակատամարտերին:

Իր առաջին ողբերգությունը բեմադրել է 25 տարեկան հասակում: Ողբերգակների մրցույթներում նրան հաղթանակ է շնորհվել 13 անգամ: Ողբերգակի մահից երկու տարի առաջ մեծ հաջողությամբ բեմադրվել է նրա «Օրեստիա» եռագրությունը: Նա վախճանվել է մ.թ.ա. 456 թ.:

Էսքիլեսի մահվան մասին մեզ է հասել հետևյալ պատմությունը. երբ նա նստած էր դաշտում, բարձրում թռչող արծիվը, ծերունու ճաղատ գլուխը քարի տեղ դնելով, նրա վրա բաց է թողնում մագիլներով բռնած կրիայի՝ պատյանը ջախջախելու համար: Կրիան ընկնում է Էսքիլեսի գլխին և սպանում նրան:

Ահա այսպիսի ողբերգական ավարտ է ունեցել նշանավոր ողբերգակի կյանքը. պատմության մեջ բացառիկ դեպք, երբ անհեթեթ դիպվածը դառնում է նման հանճարեղ մարդու մահվան պատճառ:

Մոտ երկուսուկես հազարամյակ առաջ Էսքիլեսի գրած 70 ողբերգություններից և 20 սատիրական դրամաներից պահպանվել են միայն 7 ամբողջական գործեր և զանազան ստեղծագործություններից 400 հատվածներ: Ի դեպ, հույն ողբերգակների, այդ թվում նաև Էսքիլեսի երկերի բազմավաստակ գիտակը մեզանում եղել է մեծանուն Վիկտոր Համբարձումյանի հայրը՝ Համազասպ Համբարձումյանը, որի հմուտ թարգմանությամբ ու ծանոթագրություններով լույս են տեսել հին հունական գրականության լավագույն էջերը:

Կոստան Զարյանի մտքերից

Մենք՝ հայերս, քաջ եւ տաղանդաւոր ժողովուրդ ենք: Մեր շլարածութիւնը առաջ է գալիս այն անպատրաստ մարդկանց ղեկավարութիւնից, որոնք իրենց անձնական կամ կուսակցական շահերը գերադասում են ընդհանուր շահերից: Պէտք է հրաժարւենք նրանցից, առողջ դատողութեամբ ընտրենք մեր ուղին, հրաժարւենք մեր մլուկոտ անշարժութիւնից, ուրիշների վրայ դրած մեր սին յոյսերից, մեր ոխակալ, թերի եւ նախանձոտ դատումներից եւ մեր իսկ ճակատագիրը առնենք մեր ձեռքերի մէջ:

Պէտք է կերտենք անբաժան, ամբողջական մի հայութիւն եւ պէտք է կառուցենք նրա լուսաւոր տունը:

Կա՞յ աւելի վսեմ նպատակ, քան այդ:

ՎԱՐԴԱՆ ՄԱԽՈԽՅԱՆԻ ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑ ԿՏԱՎԸ

Հաճախ մեծերի և՛ երջանկության բաժինն է մեծ լինում, և՛ դժբախտությանը: Ճակատագիրը դժբախտության ահռելի բաժին հասցրեց XX դարի առաջին կեսի մեծանուն ծովանկարիչ Վարդան Մախոխյանին: Մեծ եղեռնի ժամանակ նրա հարազատները զոհվեցին Տրապիզոնում:

1920-ական թվականներին աշխարհի բոլոր որբ երեխաների կեսից ավելին հայեր էին, որոնք ապաստանեցին հիսունից ավելի երկրներում: Վարդան Մախոխյանը Նիցցայում տեսավ մի քանի հայ երեխաների և քիչ մնաց՝ հանճարեղ կոմպոզիտոր Կոմիտասի պես խելքը թռցներ:

Ծովանկարիչը մոտեցավ և հարցրեց առաջին որբին.

-Ի՞նչ կուզենայիր:

-Հաց:

Երկրորդին դիմեց նույն հարցով.

-Հաց:

Երրորդն ասաց առանց հարցումին սպասելու.

-Հաց:

Մախոխյանը, ժամանակ չկորցնելով, որբերի ապաստարանից ասես մի ոստյունով իրեն տուն գցեց: Այս ու այն կողմ տարավ ձեռքը, բայց դրամ չգտավ: Հետո աչքն ընկավ իր գլուխգործոց նկարին: «Տրապիզոնի ծովափը» լուսաողող, չնաշխարհիկ մի գործ էր, որին նայելիս թվում էր, թե ամբողջ Սև ծովը երևում է Տրապիզոնից:

Կտավը նոր էր ավարտել և մտադիր չէր ո՛չ վաճառել, ո՛չ էլ որևէ մեկին զիջել: Մի քանի օր առաջ մեծահարուստներից մեկը ահռելի գումար առաջարկեց՝ նկարը գնելու համար, բայց Մախոխյանը մերժեց:

Հիմա, երբ մտապատկերում միայն հայ որբերն էին, չիմացավ, թե ինչպես մոռացության տվեց իր վճիռը և, կտավը վերցնելով, դուրս թռավ փողոց:

Վազելով հասավ երկար-երկար փողոցի ծայրը և մտավ մի փուռ: Տերը զարմացած նայեց քրտնաթոր մարդուն և հարցրեց.

- Ի՞նչ ես ուզում:
- Վաճառում եմ,- ասաց ու ցույց տվեց նկարը:
- Լավ նկար է երևում, ի՞նչ տամ:
- Չգիտեմ:
- Ֆրանկ չունեմ, սրա դիմաց քսան բոքոն կտամ, համաձա՞յն ես:
- Այո՛:

Մախոխյանը բոքոնները տարավ ու նվիրեց հայ որբերին: Նրան թվաց, թե այդ գիշեր աշխարհի բոլոր որբերը կքնեն կուշտ ***փորով:***

Ըստ Հայկ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

Գիտություն
Գլխավոր խմբագիր՝ Վ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Խմբագիր՝ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 26.03.2025 թ.:
Տպագրվում է ՀՀ ԳԱԱ տպարանում: